

ԴԱՐԱԲԱՂԵԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԸՆԴԱՌԱՋ

1988-ի Փետրուարը բացեց հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենավառ էջը, որը դարձաւ մեր ժողովրդի հպարտութիւնը:

Անտարակոյս, Ղարաբաղեան շարժման զարգացումն ապրեց մակրնթացութիւններ ու տեղատուութիւններ: Ժամանակը բացայացտեց սկզբնական շրջանում հարթակի վրայ յայտնուածներից շատերի քաղաքական մասնկութիւնը եւ նրանց դուրս մղեց: Նոյն թուի Մայիսի վերջին առեղծուեց Ղարաբաղեան Շարժման Հայաստանի կոմիտէն, որն իր քաղաքական իրատես եւ հեռատես գործունէկութեամբ հայ ժողովրդի պայքարը դրեց իր ազգային շահէրը պաշտպանելու առաւել արդիւնաւէտ հունի մէջ: Աստիճանաբար բխրեղացուեցին համաժողովրդական պայքարի նպատակներն ու դրանց համեմու ուղիները: Միանգամայն պարզ դարձաւ, որ ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորումն անհնար է իրագործել խորհրդային համակարգում, որ ժողովրդի կարեւորագոյն շահէրի՝ ազգային հարցերի լուծման միակ գործիքը կարող է լինել միմիայն անկախ պետականութիւնը: Ղարաբաղեան շարժումը վերածուեց Հայոց Համազգային Շարժման: Դեռ երբեք հայ ժողովրդի պատագական պայքարն առաջ չէր մղել այդքան մէծ թուով քաղաքականօրէն գրագիտ, եռամդուն, վճռական, ամենաբարդ իրադրութիւններում արագ կողմնորոշուող եւ ճշգրիտ որոշումներ կայացնելու ունակ քաղաքական գործիչների: Դա ցոյց տուեց, որ մեր ժողովրդի մէջ հասունացել էր յանուն իր շահէրի քաղաքական հին, դարաւոր ուղեգիծը թօթափելու պահանջը, եւ նադրան համապատասխան էր իր շարքերից առաջ քաշում քաղաքական գործիչներին: Եւ Շարժման լաղթանկները յաջորդում էին մէկը միւսին: Բայց Շարժման քաղաքական հակառակորդները երբեք չդադարեցրին իրենց նենգ ու դաւադիր գործունէկութիւնը: Ընդդէմ Շարժման նրանց շարքերում միաւորուում էին նախկին «երբուեալ թշնամինե-

2-18-06

ՀԱԲԱԹՈՒՅՑ ԶԱՐՍԱՆՔԸ

Վերջապէս մեր քաղաքական վերնախաւը բարեհածեց լրջօրէն զբաղուել «Ազգային անվտանգութեան ռազմավարութիւն» անունը կրող հայեցակարգային փաստաթղթի ստեղծմամբ։ Սակայն ՀՀ ազգային անվտանգութեան խորհրդի քարտուղար, պաշտպանութեան նախարար ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ առաւել քան գարմանալի բան յայտնեց. փաստաթուղթը վերջնական տեսքով ուղարկուելու է ԱՄՆ եւ Ռուսաստան՝ այդ երկրներում գործող համապատասխան կենտրոններում փորձաքննութիւն անցնելու համար։ Զարմանալի է, այդ ո՞ր մի երկիրը իր ազգային անվտանգութիւնը կանխորոշող հիմնարար փաստաթուղթը, որը կարող է եւ պէտք է ունենայ նաեւ պետական զաղոնիք հանդիսացող դրոյթներ, ուղարկուած է դուրս։ Երեւի թէ Եւրախորհրդի անդամ դառնալուց յետոյ մեր պաշտօնեանները գէշ իսայաթ են ձեռք բերել՝ ցանկացած կարեւոր փաստաթուղթ ուղարկել տարբեր վենետիկներ՝ «դաբրո» ստանալու եւ նոր միայն դա կիրառելի գարձնել։ Մնում է զարմանալու պատճեանալու գարմանալ, որ 15 տարուալ

անկախ պետութեան, թւում է թէ
լուրջ, այրերը այդպէս էլ չեն
ձերբագատուել տարբեր «պալիտ-
բիւրոների» բարդութից:

Այն, որ օմբուդմանի ընտ-
րութիւնների ժամանակ խորհր-
դարանի մեծամասնութիւնը իրեն
պահեց այնպէս, որ այդ պահուած-
քից կ'ամաչէր անգամ 2000 դրամ
ընտրակաշառք ստանալու դիմաց
քուէաթերթիկային «կարուսելի»
մասնակից դարձած վերջին ուամի-
կը, ապացուցելու կարիք չունի.
Դա, ինչպէս կ'ասէր Օստապ Բենդե-
րը, «բժշկական փաստ է»:

Նոյն Աժ-ի պետական գործական
յանձնաժողովում քննարկուել է
առաւել քան հետաքրքրական փաս-
տաթուղթ՝ «ՊԱՏԳԱՄԱՀՈՐԻ ՊԱՀ-
ՈՒԱԾՔԻ ՄԱՍԻՆ» օրէնքի նախա-
գիծ: Ազդտեղ կան առաւել քան
գարմանալի տողեր. «Պատգամա-
ւորը պէտք է դրսեւորի այնպիսի
վարքագիծ, որը կը պահպանի եւ
կ'ամրապնդի հասարակութեան հա-
ւատը եւ վստահութիւնը ՀՀ Աժ-ի
գործունէութեան վերաբերեալ»:
Զգիտենք, միգուցէ 2066 թուակա-
նի Աժ-ում ծողընտրեալները հիմ-
նականում կը համապատասխանեն

ՄԱՅՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՇՔԱՐԱՆԴԵԱ

Եթէ Նկատել եք, հայերն իրապ
հանդիպելիս չեն հարցնում «որ
տեղ ես ապրում»: Հարցնում են
«որտեղ ես մնում»: Քոչարեանը
Հայաստանը զեկավարում է հենց
այս տրամաբանութեամբ: Նա Հա-
յաստանում չի ապրում, նա Հայաս-
տանում «մնում է»: Մնում է՝ քանի
դեռ չեն քշել: Եւ իր իշխանութեան
թիւ մէկ ինդիրը համարում է
այնպէս անել, որ հնարաւորին
երկար «մնայ»:

Պրոբլեմն այն չէ, որ Քոչար
եանը գրագիտ հայերէն խօսել չգիտի,
որ հեռուստաեթերով գոեհի
պատմութիւններ է պատմում կլիզզ
մաների ու բառաշող կովերի մասին,
տեղի-անտեղի ցիշատակում և
վատ պարողին խանգարող հանգա
մանքները, ժամանակ առ ժամա
նակ կախւում է առաջին պատա
հած սուրնիկից եւ այլն: Խնդիրն
այն է, որ Հայաստանն իրեն նման
չքեղութիւն թոյլ տալ չի կարող
Այո, ԱՄՆ նախագահը կարող է
առանձնապէս չփայլել ինտելեկտոր
ինտերնետում նոյնիսկ յատուկ կայ
քեր կան, որտեղ ներկայացուած են
Բուշի մտքի «գոհարները», Կալի
ֆոռնիայի բնակիչները կարող են
իրենց թոյլ տալ նահանգապետ
ընտրել Շվարցենեգերին, որի հիմ
նական արժանիքը մկաններն են
բայց ԱՄՆ-ը կայացած պետութիւն
է, եւ երկիրը դրա հետեւանքով չ
տուժի:

Մինչեւ Հայաստանը ոչ
միայն կայացած պետութիւն չէ
այլեւ օբյեկտիւորէն գտնւում
ծանրագոյն պայմաններում: Ոչ ծո-
վային ասհմաններ ունենք, ոչ բնա-
կան հարստութիւններ, ոչ կայա-
ցած տնտեսութիւն: Մի խօսքով
գրեթէ ոչինչ չունենք: Միակ բանը
որ կարող էինք ունենալ, խելօգ
ղեկավարն է եւ կառավարման ար-
դիւնաւէտ համակարգը: Կրկնու-
ենք՝ աս միակ շանան էր: Մինչդեռ
Քոչարեանն արդէն ութ տարի է
ինչ ոչ թէ երկիր է ղեկավարում
այլ զբաղուում է քաղաքական ծա-
մածութիւններով: Այժինքն՝ անու-
է ամէն ինչ, որպէսզի ձեւացնի, թի
երկիր է ղեկավարում, իսկ իրակա-
նում հիմնական մտահոգութիւնն
այն է, որ յանկարծ մի ուրիշ
իրենից չխլի ծամծածութիւններ
անելու իրաւունքը:

Այս, հիւանդներն իրենք իրենց
բուժել չեն կարող, դրա համար
բժիշկ է պէտք: Իսկ Հայաստանը
քաղաքական դաշտն այսօր յիշեց
նում է հիւանդանոց, որտեղ հիւանդ
ները բժիշկներին վոնդել են, իրալ
հետ կոռուել, թէ սրանից յետոյ որ
պիտի լինի «շէֆը», ու այդ կուտա
յաղթել է Քոչարեանը: Ոչ միայն
յաղթել է, այլև միւսներին ներքա-
շել իր իսկ յօրինած խաղի մէջ, ու
հիմա բոլորը զբաղուած են նոյն
մայմունութեամբ: Ընդ որում, հաս-
կանալի է եւ «արտաքին ատրի-
բուտիկան» (բոլորը պիտի ձեւաց-
նեն, թէ մտածում են պետութեան
մասին), եւ բուն իմաստը (մինչեւ
վերջ լափել երկրի եղած-չեղած
կոճուկ միջոգնեող):

այդ տողերին, սակայն այսօր դա ոչ
միայն զարմանալի է հնչում, այլեւ
ներկայիս «կնոպկա սեղմողների»
եւ վազէվազ «պախանի» հրահան-
գը կատարողների խորհրդարանա-
կան մեծամասնութեան պայմաննե-
րում հաստատ կը յարուցէլ
թռչնազրիկից սատկած եփած հա-
ւի ծիծառո:

«ԻՐԱԻՌՈՒՔ»

Արդիւնքում Հայաստանը դարձել է աշխարհից կտրուած, աշխարհից արհամարհուած կամ լաւագոյն դէպքում մոռացուած մի պուճուր տարածք, որտեղ իրենք իրենց «իշխանութիւններ» անուանող մի քանի հոգի, ամէն մէկն իր խղճուկ կերակրատաշտը գրկած, լափում է իր հանապազօրեայ լափը՝ առանց մտածելու, որ վաղը միւս օրը իրենց զաւակները բուժի կարգավիճակով յայտնուելու են որեւէ օտար երկրում՝ սեփական երկրի բացակայութեան արդիւնքում:

Հետաքրքիր է, սրանք երբեւէ
մտածել են, թէ կողքից նայելիս
ինչ տեսաք ունեն: Հասկացել են, թէ
ինչ է մտածում աշխարհն իրենց
մասին՝ տեսնելով, թէ ինչպէս են
իրենք թալանած փողերով եւրո-
պաներում մասնակցում տարբեր
միջազգային հանդիպումների, իսկ
երեկոները սագագողի ճարպիկու-
թեամբ «թաքուն» ծլկում հիւրա-
նոցից ու մտնում առաջին պատա-
հած կազինոն:

Կ ը ս լ լ կ ն ո ւ մ ե ն ք՝ խօսքն ա ն ձ ե ր ի
մ ա ս ի ն չ է, թ է ե ւ պ ր ո բ լ ե մ ն ի ն ք ն ի ն
ա ն ձ ն ա ւ ր ո ւ ա ծ է: Հ ա յ ա ս տ ա ն ի ո ր ե ւ է
ա ն կ ի ւ ն ո ւ մ մ ի շ տ է լ կ ը գ տ ն ո ւ ի
ո ր ե ւ է ա տ ո ւ ն ի կ, կ ո ղ ք ի ն՝ բ ա ս կ ե ս -
բ ո լ ի դ ա շ տ, լ ո ղ ա ւ ա զ ա ն ե ւ հ ր ա ձ -
գ ա ր ա ն: Խ ն դ ի ր ն ա յ ն է, ո ր մ ա ր դ -
կ ա յ ի ն ա յ դ յ ա տ կ ա ն ի շ ն ե ր ո վ ե ւ
ի ն ս ե լ ե կ տ ի ա յ դ մ ա կ ա ր դ ա կ ո վ չ ի
կ ա ր ե լ ի ղ ե կ ա վ ա ր ե լ Հ ա յ ա ս տ ա ն ր:

Առանց այն էլ տուժած երկիր է:
Հայաստանը պարզապէս դա-
տապարտուած է խելօք զեկավար-
ներ ունենալ: Այլ ելք չկայ: Կամ
երկիրը կը դեկավարուի խելքով,
կամ որպէս երկիր կը վերանայ: **Քոչարեանն** առաջմ գնում է երկ-
րորդ ճանապարհով: Հստ ամենայ-
նի՝ իրենից անկախ պատճառնե-
րով:

**ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ
«ԶՈՐՈՊՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»**

ՄԱՍԻՄ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹՔԻԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵԱՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ
ԽՄԲԱԳԻՌ՝
ՏՕԹԹ. ԱՐԾԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒԼՈՅԵԱՆ
ՍԱՐԱԿ ԹՈՒԹԹԵԱՆ
ՎԱԶԳԻՆ ԽՈՏՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԻԹԵԱՆ
Քեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.

ՀՀՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՅԱԶՈՐԴ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ԵՐԵՒԱՆ, «ՂՐԱԳԻՐ»: Առա-
ջիկայ ընտրութեանը ՀՃՇ-ն կը
մասնակցի, քանի որ կանգնած է
այլընտրանքի առաջ՝ վերսկսել քա-
ղաքական ակտիվութիւնը կամ
տրուել լիակատար մոռացութեան:
Իր կուսակցութեան վիճակն այդ-
պէս է բնորոշում Հայաստանի նախ-
կին արտգործնախարար Ալեքսանդր
Արզումանեանը:

Նա կարծում է, որ կուսակցութիւնն ամբողջութեամք գիտակցում է այդ իրազրութիւնը եւ մտածում է ճիշդ քայլ կատարելու ուղղութեամբ: Իսկ ՀՀՆ ներկայիս պատիւութիւնը Ալեքսանդր Արգումանեանը պայմանաւորում է հասարակական պահանջարկի բացակայութեամբ: Միեւնուն ժամանակ ՀՀ-ն բաւական պահանջուած կուսակցութիւն է քաղաքական դաշտի խաղաղողների շրջանում: Այդ պահանջարկն, ըստ Ալեքսանդր Արգումանեանի, բաւական իւրօրինակ արտայացութիւն է ստանում, որի նմանն աշխարհում գոյութիւն չունի: «Ունիկալ վիճակ է: Արդէն

ԱՐԵՎԻՑ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԴԺՈՒԱՐ ԿԸ ԼԻՆԻ ՀՀԿ-Ի ՀԱՄԱՐ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ», «ԼՐԱԳԻՐ»: «Եթէ 2007թ-ի ընտրութիւններում ՀՀԿ ցուցակով առաջադրուի ՊՆ Սերժ Սարգսեանը, բնականաբար մեր արդիւնքներն աւելի մեծ կը լինեն», - այսօր լրագրողներին ասաց ԱԺ ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը եւ միաժամանակ աւելացրեց. «Այսօր դեռ վաղ է դաշինքների մասին խօսելը»: Պարոն Սահակեանի կարծիքով՝ մինչեւ աշուն դեռ որեւէ լուրջ վերադասաւորումներ քաղաքական դաշտում չեն լինի. «Որոշ ուժեր եւ յատկապէս լրագրողներն են փորձում լրացնածութիւն ստեղծել»:

Մինչ այդ հանրապետական-
ները փորձելու են երկրում տնտե-
սական աճ ապահովել, ինչպէս ասաց
Գալուստ Սահակեանը, հենց դա էլ
ընտրութիւններում նրանց բազան
է հանդիսանալու։ Այս առումով՝
հանրապետականները ընտրութիւն-
ներում պատրաստում են ներկա-
յացնել Անդրանիկ Մարգարեանի
պաշտօնավարութեան ընթացքում
տեղի ունեցած առաջընթացը։

Պարոն Սահակեանն այսօր քաղաքական ուժերին մէկ անգամ եւս համագործակցութեան կոչ արեց։ Օգտուելով առիթից լրագրողները փորձեցին պարզել, թէ պարբերաբար համագործակցութեան կոչ անող խորհրդարանական մէծամասնութիւնը ինչչու՞ օմքուղամենի հարցում չզիջեց ընդդիմութեանը։ «Սահմանադրութիւնը չսիրած ընդդիմութիւնը նպաստեց, որ երկրում տեղի ունենաց առաջին դրական գործընթացը՝ Մարդու իրաւունքների պաշտպանի ընտրութիւնը», - օմքուղամենի ընտրութեանն ընդդիմութեան մասնակցութիւնը ողջունելով՝ ասաց պարոն Սահակեանը։ Նրա կարծիքով՝ ընդդիմութիւնը ոտքի վրաց չպէտք է առաջադրեն իր թեկնածուներին, այլ՝ մի քանի ամիս առաջ շրջանառութեան մէջ զնէր։ «Մենք մէր թեկնածուին դեռ ամռանից էինք շրջանառութեան մէջ դրել։ Քաղաքական ուժերը ոչ թէ պէտք է միմենաց զիջեն, այլեւ՝ պայքարով հարթեն իրենց ճանապարհը»։ «Փակագիծ» ակուղբում հան-

Հինգ, վեց, եօթ տարի է ՀՀՇ-ն
իշխանութեան չէ, չի գործում, իսկ
ընդդիմութիւնը ներկայ իշխանու-
թեանը քննադատելու փոխարէն
շարունակում է ՀՀՇ-ի իշխանու-
թիւնը քննադատել։ Դա իւրայա-
տուկ բան է, միայն հայերին է
բնորոշ այդ մօտեցումը», ասում է
Ալեքսանդր Արզումանեանը:

Նրա խօսքով, ընդդիմութիւնը հանրահաւաքներ է հրաւիրում եւ փոխանակ քննադատելու այն իշխանութեանը, որից իշխանութիւն են պահանջում, քննադատում են ՀՀՇ-ին, որը արդին շօշափելի էլ չէ: «Բոնցքամարտում դա կոչում է մենամարտ ստուերի դէմ: Հիմա ՀՀՇ-ն ստուեր է, բայց շարունակում են այդ ստուերի դէմ պայքարել», ասում է Ալեքսանդր Արգումանեանը: Նրա գնահատմամբ, այդ իրավիճակում կուսակցութիւնը միանգամայն ճիշդ է վարում, որ դադար է վերցրել: Ա. Արգումանեանը գտնում է, որ դա հասարակութեանը կ'օգնի աւելի յատակ գիտակցել՝ ինչն ինչոց է եւ ով ով է:

Դիպման աւարտին պարոն Սահակ-
եանը վստահեցրեց, որ 2007թ-ին
երկնքից քաղաքական ուժեր չեն
ընկնելու Աժ: Նա նաեւ չմոռացաւ
կրկնել, որ աշխարհում չկայ մի
երկիր, որտեղ պատգամաւորը երբ
ուզի գայ խորհրդարանն, իսկ, երբ
ոչ՝ չգայ: Ակնարկն ում հասցէին
էր, պարզ էր բոլորին:

«Յաօք սրտի այդ հարցում ես
պատրաստի գեղատում չունեմ», -
ասաց Գալուստ Սահակեանը:

**Ապագայ խորհրդարանի
նախագահ պէտք է լինի
Անդրանիկ Մարգարեանը,
Երկրի նախագահ՝
Սերժ Սարգսեանը**

Հայաստանի կառավարութեանը մօտ կանգնած աղբիւրի տուեալներով, արդէն մի քանի օր ընթանում են Գագիկ Մառուկեան-վարչապետ Անդրանիկ Մարգարեան բանակցութիւններ, որոնց քննարկման առարկան 2007թ. խորհրդարանական ընտրութիւններին միասին, դաշինքով մասնակցելն է: Նոյն աղբիւրների տեղեկութիւններով, այդ բանակցութիւններում քննարկում է նաեւ պետական բարձրագոյն պաշտօնների խնդիրը, ըստ որի, ապագայ խորհրդարանի նախագահ պէտք է լինի Անդրանիկ Մարգարեանը, երկրի նախագահ՝ Սերժ Մարգարեանը:

Սրանով փաստօրէն հերքում
են հայկական մամուլում քանիցս
արուած հետեւութիւններ, թէ ՀՀԿ-
ում առանձնապէս ոգեւորուած չէ-
ին Մառուկեանի «Բարգաւաճ Հա-
յաստան» կուսակցութեան բեմե-
լով, եւ այս գործընթացը կապում
էին Հանրապետական կուսակցու-
թեանը թուլացնելու մտադրութիւն-
ների հետ։ Ըստ այդմ, եթէ այս
տեղեկութիւնները համապատաս-
խանում են իրականութեանը, ապա
փողը, վարչական ռեսուրսները,
նրանց սատարող օլիգարքիական
շրջանակները յայտնուում են մի
բեւեռում, որին կարող են հարել
նաեւ ընդդիմութեան որոշ շրջա-
նակներ։

**ԱՐՄԱՆ ՄԵԼԻՔԵԱՆ. «ԱՐԴԻՒՆԱՔՏ ԽԱՂԱԴ
ԼՈՒԾՈՒՄՆ ԱՆՇԱՐ Է ԱՌԱՍՑ ԼԵՇՆԱՅԻՆ
ԴԱՐԱԲԱԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ»**

«ԱԶԱՏՈՒԹՅԻՒՆ ՌԱՏԻՈՅ»
Լեռնային Ղարաբաղի Նախագահ Հայոց
խորհրդական, Նախակին արտգործ-
նախարար Արման Մելքքեանի հա-
մոզմամբ, Ռամբոյչում կայացած
բանակցութիւններից առաջ միջազ-
գային հանրութեան լաւատեսու-
թիւնը «ինչ-որ բաներ սիմալ հաշ-
ուարկելու հետեւանք էր»:

«Նոյնիսկ այս ձեռաչափով ընթացող բանակցութիւնները՝ բացառելով Լեռնային Ղարաբաղի մասնակցութիւնը, արդէն իսկ որոշակի լուրջ խոչընդունել են նախատեսում որեւէ դրական ելքի համար» - «Ազատութիւն» ուղիղութանին ասաց Արման Մելիքեանը: - «Արտառոց որեւէ բան այս [Ռամբոցի] հանդիպման ընթացքում տեղի ունենալ, թերեւևս, չը կարող»:

Մելիքնանի խօսքերով՝ «անընդունելի եւ անհնարիկ» ատրպէցանական կողմից յայտարարութիւնը թէ «իրենց պատկերացմանը՝ տարածքային ամբողջականութիւնը չպիտի խախտուի»:

«Եւ այս փաստի հետ պիտի ըրուրը հաշուի նստեն: Եւ որեւէ բանակցութիւն առանց այս փաստերը հաշուի առնելու չի կարող արդիւնաւէտ լինել»: - աւելացրեց նա

Մելիքեանի կարծիքով, անհանգստ է նար է խնդրի կարգաւորման շուրջ՝ լաւատեսաւթիւն ունենալ, երբ Աստրպէջճանը չի ընդունում, որ Ղարաբաղն անկախ պետութիւն է: Այսօր խօսում է, թէ «իբր բանակցակին մեղանին են դրուած ատրպէջճանցի»:

ԵՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

«ԱԶԱՏՈՒԹՅԻՒՆ ՌԱՏԻՕՑ»
Լրագրողների պաշտպանութեան կո-
միտէյի (Committee to Protect Jour-
nalists) դիտարկումների համա-
ձայն, 2005 թուականի Հայաստանի
ամենամեծ խնդիրը՝ 2002 թուա-
կանից հեռուաստաեթերից զրկուած
«Ա1+» -ի հերթական, թուով 10-
որ լաւագի մեռժումն է:

«Հակառակ եւրախորհրդի եմիջապայմանը այն է, որ կազմակերպութիւնների յորդորների՝ Հայաստանի կառավարութիւնը ֆետրուարին կրկին չարտօննեց հեռուստացների հեռարձակումը», - փաստում է կոմիտէն:

Նոյն ամսին ներքին գործերի
նախարարութիւնը կասեցրեց «Հայ-
կական ժամանակ» օրաթերթի
գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշին-
եանի աւտոմեքենան այրելու առն-
չութեամբ յարուցուած քրէական
գործի քննութիւնը: «Ոչ ոք այդ-
պէս էլ չձերբակալուեց, ոստիկա-
նութիւնը անգամ չի հարցաքննել
այն քաղաքական գործին, որը
թերթի պնդմամբ, պատասխանա-
տու էր լանգագործութեան հա-

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ԱՍԴԵՐՈՎ» ՀԻՒՐԱՆՑՆԵՐԸ ՔԻՉ ԵՆ

Թէեւ ՀՀ կառավարութիւնը դեռեւս 2004 թուականից էր կարգ մշակել հիւրանոցների որակաւորման, այսինքն՝ աստղեր չնորհելու մասին, այնուամենայնիւ, առաջին աստղերը չնորհուեցին միայն ֆետրուար 20-ին, այն էլ բնդամէնը մէկ հիւրանոցի:

Այսուհետ միայն «Կոնգրես» հիւրանոցն իրաւունք կ'ունենայ իր պատերին փակցնել իր մատուցած ծառայութիւնների կարգին համապատասխանող աստղերի քանակը։ Տուեալ դէպքում դա լինելու է 3 աստղ։ Հայաստանի միւս հիւրանոցները, կարգի համաձայն, չեն կարող յայտարարել իրենց «աստղերի» մասին, քանի որ առաջժմ չեն էլ դիմել որպակաւորուելու համար։

ԱԶԳԱՅԻՆ

Գրասեղանիս վրայ է Մանուկ Ստեփանեանի «Սոցիալ - Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը առաջին աշխարհամարտի եւ հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանում» վերնագրով աշխատութիւնը:

Հեղինակին մինչ օրս ճանաչել եմ, որպէս չորրակի թատերագէտի եւ ասմունքով ու այդ առումով մի տեսակ թերահաւատութեամբ սկսեցի կարդալ վերոյիշեալ գիրքը: Թերահաւատութեամբ՝ յատկապէս, որ նուիրուած է ոչ միայն Հնչակեան կուսակցութեան, այլև հայ ժողովրդի համար այնպիսի մի ճակատագրական ու տազնապալի ժամանակահատուածի, ինչպիսին առաջին աշխարհամարտի ու ցեղասպանութեան ժամանակաշրջանն է: Բայց առաջին իսկ էջերից ցրուեցին թերահաւատութեան ամէն մի նշոյլ եւ կարդալով գիրքը, համոզուեցի, որ գործ ունեմ մի հասուն պատմաբանի հետ, որը ամէն մի միտք լուսաբանում է իւրովի, ամենայն ճգրտութեամբ եւ այդ ամէնը հաստատում արխիւսին վաւերագրերով:

Գիրքը ունի ներածութիւն, վերջաբան, բաղկացած է երեք գլուխից, շուրջ եօթ ենթագլուխից: Վերջում արուած է օգտագործուած դրականութեան եւ աղբիւրների ցանկը, որից կարելի է եզրակացնել, թէ ինչ քրտնաջան աշխատանք է կատարել երիտասարդ հեղինակը:

Ներածականում համառօտ նկարագրուած է Հնչակեան կուսակցութեան պատմութիւնը 1887թ. մինչեւ 1918թ., նշելով նա - թեմայի նշանակութեան ու արդիականութեան, աշխատութեան նպատակի եւ խնդիրների, ուսումնասիրութեան գիտական նորոյիթի եւ հետազոտութեան ուսումնասիրուածութեան աստիճանի մասին:

Գրքի առաջին գլուխը կրում է «Հնչակեան կուսակցութիւնը առաջին աշխարհամարտի նախօրեակին եւ սկզբին» վերնագիրը:

Այս գլխում հեղինակը նշում է, որ երիտարքական յեղաշրջումից յետոյ եւ յատկապէս առաջին աշխարհամարտի նախօրեակին էլ աւելի անտանելի դարձաւ հայերի վիճակը Արեւմտեան Հայաստանում եւ թուրքիայի հայաբնակ բոլոր վայրերում: Հեղինակը իր այս միտքը հաստատում է կոստանդնուպոլս Ռուսաստանի դեսպան Նիկոլայ Գիրսի, էրգորումում նոյն երկրի գլխաւոր հրապառուսութեան այլ երկրների դիւնագէտների յղած գեկուցագրերով:

Ստեղծուած իրավիճակի թերագրանքով 1909թ. Յուլիսի 12 -

ԱՐԺԵՔԱՒՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ Ս. Դ. ՀԱԶԱԿԵԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ

Յոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ ուսական գօրքը սկսեց թողնել Արեւմտեան Հայաստանի ազատագրուած շրջանները: Օգտուելով առիթից թուրքիան գրաւեց ոչ միայն Օսմանեան կայսրութեան հայկական տարածքները, այլեւ ներխուժեց Անդրկովկաս: Ստեղծուած ծանր պայմաններում հնչակեանները շարունակում են մարտնչել թուրքական կանոնաւոր գօրքերի դէմ, որի պատճեան կամուս կամ այն կուսակցութիւններին, որոնք դաշինքի մէջ էին երիտարքական հայկական կուսակցութիւնը սկզբունքուն հարածարուեց երիտարքերի հետ համագործակցելուց:

Այդ տարիներին Հնչակեան կուսակցութիւնը կապեր է հաստատում իթթիւաթականներին հակագիր կուսակցութիւնների ու հոսանքների հետ, ջանում համախմբել կայսրութեան հպատակ ժողովուրդների աշխատաւորական մասսաներին, քանի որ տիրող կարգերից տուժում են ոչ միայն քրիստոնեաները, այլ նաև մահմեդականները:

1911թ. Սեպտեմբեր - Հոկտեմբեր ամիսներին Սալոնիկում կայացաւ «Միութիւն եւ Առաջադրմութիւն» կուսակցութեան IV համագումարը, որտեղ որոշուեց ձուլել, թրաքանել թուրքիայի հպատակ ժողովուրդներին: Այս փաստը եւս չսթափեցրեց հայկական այն կուսակցութիւններին, որոնք դաշինքի մէջ էին երիտարքական հայկական կուսակցութիւնը միայն Հնչակեան կուսակցութիւնը սկզբունքուն հարածարուեց երիտարքերի հետ համագործակցելուց»:

1912թ. Հնչակեանները համագործակցութեան պայմանագիր կնքեցին «Իթթիւաֆ» կուսակցութեան հետ, մշակեցին գործողութիւնները, նրա քաջարի հրամանատարները՝ Գրիգոր Աւշարեանի, Հայկ Բժշկեանի, Պանդուխտի սիրանաները:

1912թ. Հնչակեանները համագործակցութեան պայմանագիր կնքեցին «Իթթիւաֆ» կուսակցութեան հետ, մշակեցին գործողութիւնների համատեղ պյան:

Գրքի առաջին գլխում հեղինակը առանձնայատուկ ուշադրութիւն է դարձրել առաջին աշխարհամարտի տարիներին կամաւորական շարժմանը, շրջանառութեան մէջ դրել մի շարք քիչ յայտնի արդիւրային փաստաթղթերը: Ճիշդ եւ դիպուկ է գնահատուել Հնչակեան կամաւորական 6 - րդ գնդի մարտական գործողութիւնները, նրա քաջարի հրամանատարները՝ Գրիգոր Աւշարեանի, Հայկ Բժշկեանի, Պանդուխտի սիրանաները:

Երկրորդ գլխում նորիրուած է Հայոց Մ'եծ եղեռնի ժամանակաշրջանում Հնչակեան կուսակցութեան գործունէութեանը: Այստեղ հեղինակը ոչ միայն տուել է թուրքական իշխող վերնախաւի հակահայկական քաղաքականութեան բուն էութիւնը, բացայատել մէծ տէրութիւնների երկդիմի, կեղծ մարդարաբառութիւնը, որոնք փաստորէն իրենց գործողութիւններով թուրքերին խրախուսեցին իրազործելու իրենց նպատակը՝ հայոց ցեղասպանութիւնը:

Հեղինակը նորայացած մի շարք փաստաթղթերի հիման վրայ հա-



Հնչակեան կուսակցութեան նօքը հիմնադիրները

ին կոստանդնուպոլս տեղի ունեցաւ Ս.Դ.Հ.Կ. 6 - րդ ընդհանուր պատգամաւորական ժողովը, որին մասնակցում էին ԱՄՆ - ից, Ռուսաստանից, Եղիպատոսից, Բուլղարիայից, Պարսկաստանից եւ այլ վայրերից ժամանած պատգամաւորներ: Համագումարը փոփոխութիւն կատարեց կուսակցութեան ուղագրի մէջ: Սոցիալիստ - յեղափոխական Հնչակեան կուսակցութիւնը պաշտօնապէս վերանուեց Սոցիալ - Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը:

Մարտավարական նկատա-

ռումներով տուեալ ժամանակահամառուածը հնչակները գտան բաւարարուել Արեւմտեան Հայաստանի «վարչական ընդարձակ ինքնավարութիւն» ձեւակերպումով, ի տարբերութիւն առաջին ծրագրի, որտեղ պահանջում էր Արեւմտեան Հայաստանի անջատումը Օսմանեան կայսրութիւնից:

Աշխատութեան այս գլխում Մ. Ստեփանեանը համոզիչ փաստարկներով ապացուցում է, որ երիտարքերի ու պահանջում էր Արեւմտեան Հայաստանի անջատումը իրենց նպատակը՝ հայոց ցեղասպանութիւնը:

Հեղինակը նորայացած մի շարք փաստաթղթերի հիման վրայ հա-



Authorized Agent CA Insurance Lic. #0494056
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association



INSURANCE COVERAGE CAN HELP YOU FINANCIALLY

ԵՐԲԵՔ ՈՒԾ ԶԵ ՎԵՐԱԲԵՆԵԼԻ
ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**BEDROS, SIAMANTO
MARONIAN**

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ՎԱՐԴԱՆԱՑ ՏԱՐԺՈՒՄԸ

ԴՈԿՏ. ԳԵՂՐԳԻ ԽՐԱՊԵԱՆ

Տարածաշրջանում մքայցում
էին երեք պետութիւններ. Հռոմը,
որը 4-րդ դարի սկիզբներին բա-
ժանուեց երկուսի՝ Արեւմտեան և
Արեւելեան (Բիւզանդիայի) հատ-
ուածների, Պարսկաստանը, որտեղ
3-րդ դարի սկիզբներին տապալուեց
Պարթեւական իշխանութիւնը և
հաստատուեց Սասանեանը և Հա-
յաստանը, որտեղ առաջին դարու
սկիզբներին կործանուեց Արտաշէս-
եան իշխանութիւնը և նոյն դարի
կէսերին հաստատուեց Արշակուն-
եաց թագաւորութիւնը: Հարեւան
երկու հօգոր կայսրութիւնների ծրագ-
րի մաս էր կազմում շրջակայ երկր-
ների, այդ թւում Հայաստանի գրա-
ւումն ու դրանց պետականութեան
ոչնչացումը: Հայաստանը ձգուում
էր շահարկել այդ երկուսի հակասու-
թիւնները, ովհաւորել համեմատա-
բար փոքր պետութիւնների (Վրաստան, Աղուանք, Եղեսիա,
Ալանաց և այլ) միասնութիւնը եւ
ապահովել այդ երրորդ ուժի ան-
դամների ինքնուրոցնութիւնն ու
անկախութիւնը:

Պարական ու Բիւզանդական
Կայսրութիւնները ազգային պետու-
թիւններ չէին: Նրանք տարբեր
ազգերից կազմուած ու մի ցեղապե-
տի կամ իշխանի զվարութեամբ ստեղծուած կառուցներ էին: Հայաս-
տանը ազգային պետութիւն էր: Նա
իր եւ իր դաշնակիցների ինքնա-
պաշտպանութեան գործում լայնօ-
րէն գործադրում էր ազգայինի,
ազգային ծակոյթի եւ գիտակցու-
թեան կազմակերպումը: Այդ ասպա-
րէզում վճռական նշանակութիւն
ունեցաւ քրիստոնէութեան պետա-
կան կրօն հռչակումը, հայ եկեղեցու
ազգայնացումը, հայ գրերի գիւտն
ու գրաւոր հայ մշակոյթի կերտու-
մը, իմացութեան տարբեր ճիւղե-
րում հայկական դպրոցի հիմնադր-
ութիւնը: Այդ բոլորի հետ սերտօ-
րէն կապուած ու դրանց վրայ է
յինտում Վարդանանց շարժումը:
Վարդանանց յաղթանակը նուար-
սակի դաշնագրով եւ Վարդանանց
ողու աստիճանական տիրապետումը
հայ պատմութեան ու գիտակցու-
թեան մէջ հաստատումն են այն
բանի, որ նախորդող միջոցաւում-
ները չիմնաւորուած ու ծիշտ էին:

Վարդանանց շարժումը մշակեց հայ ազատագրական պայքարի գաղափարախօսութեան հիմքերը



Մարտ 4-ի Ներկայացումը կը հովանալորէ Նոր Սերունդ Աշակութային Միութիւնը Տոմսերը Ստանալու Համար Դիմել (818) 502-3233

ՎԱՐԴԱՆԱՆՔԻ ՈԳԻՆ

Ծարունակուածէց 1-էց

բապետ Վարդան Մամիկոնեանը,
պարսիկ հրամանատար Մուշկան
Նիսալաւուրտի քակարդին զոհը
դառնալով:

Ըազմական նակատի վրայ տարանջատուած -յարաբերաբար բայց այս գինուորը սակայն ամբողջ էռութեամբ զինուած էր իր անպարտելի հաւատիքի ու անսակարկ հայրենասիրութեան անխոցելի վահանով։ Ան, իր նոր Սպարապետ Վահան Մամիկոնեանի առաջնորդութեամբ բարձրացաւ հայրենի լեռներն ու քաւուտները, իր սուրբ պատերազմի ուրոյն եղանակով շարունակելու համար ընդդեմ թշնամին։ Արդի ժամանակ-ներու խմբային, դարանակալ ու յանկարծակի՝ բարդիզանական ու ազմակարութեամբ երկարատև յարձակումներու ձեւը ստացած հայ մարտական խումբերու մաշեցնող գրոհները, բոլորեցին իրենց երեսուն տարին։ Պարսից կայսրութիւնը, հարկադրուած, հայոց Սպարապետ Վահան Մամիկոննեանի հետ կնիքոց նուարսակի Դաշինքը, 484 բուականին։ Կայսրութիւնը ճանչցաւ Հայաստանի ազգային, բաղամական եւ կրօնական ուրոյն այլ ազատ ստատսունի իրեն հաւասարազօր իրավինակր-

Սւարայրը, սակայն, բարոյական յադքանակ մը չէր լոկ, այլ նաև՝ Քաղաքական ու ռազմական հրաշալի իրագործում մը:

Պատերազմներու աւարտին՝ բանակցութեան նստողները ընդհանրապէս կ'ըլլան անոնի, որոնց միջեւ գոյութիւն ունի ուժերու հաւասարակշռութիւն:

Նման բան գոյութիւն չունելը

հայերու եւ պարսիկներու միջեւ: Ուժեղ էր պարսիկը իր ահեղ կայսրութեամբ: Ուժեղ էր ան իր անհամար մարդուժով: Ուժեղ էր իր զինական միջոցներով: Հայաստան, քող որ անհամբ-մատօրէն տկար էր իր սահմանա-

փակ աշխարհատարածով, փոքր մարդուժով եւ ունեցած զինական հնարաւորութիւններով՝ սակայն եւ այնպէս, գերակշորէն ուժեղ էր իր հաւատքով, հայրենասիրութեամբ եւ աստուածատուր իմացական արժանիքներով։ Զկայ ոչ մէկ ֆիզիկական ուժ, որ կարենայ տիրապետութեան, հոգեկան արժանիքներուն վրայ։ Տրդատ՝ բազաւոր հայոց, ծունկի եկաւ Խոր Վիրապի կալանաւոր Գրիգոր Լուսաւորիչին առջեւ։

Եղիշէ Պատմիչ կը վկայէ, թէ
«Կողմերու միջեւ յաղընդ կամ
պարտուող չկար»: Բայց մենք պի-
տի փորձենք մեր մտևերը միելաւ-
լի յառաջ, հարց տալու համար՝ թէ
ինչպէ՞ս մեկնաբանել Ատրպատա-
կանի սահմանին վրայ կնուած
Նուարսակի Դաշինքը, եթէ ոչ նա-
եւ որպէս Քաղաքական ու զինուո-
րական ամբողջական յաղընակ:
Մենք կը հաւատանք, թէ Վարդա-
նանքը բարոյականեն անդին կ'անց-
նի՝ կորողելով Վարդանանց Ոգիի

ի բաշալի յաղթանակը՝ Պարսիկ
կայսրութեան ու բոլոր, բոլոր ժա-
մանակներու կայսրութիւններու
վրայ, որոնք ծրագրեցին հայուն կո-
րուստը։ Ապացո՞յց։ Ապրեցանի
մինչեւ այսօր։ Կերտեցինք ազատ,
անկախ Հանրապետութիւն։ Ազա-
տագրեցինք Արցախը։ Սանդիսա-
մատ առ սանդիսամատ, նուանելու
վրայ ենք Հայոց դէմ զործադրուած
1915-ի 8եղասպանութեան միջազ-
գային նանաչումը։ Կ'ապրինք այ-
սօր։ Պիտի ապրինք յաւիտեան, բա-
նիկ ապրի այդ ոզին մեր մէջ։

Բայց կայ աւելին: Վարդանանքի խորհուրդը իր մեջ կը բռվանդակէ եւս, անշուշտ առանց չափազանցութիւններու երթալու՝ տարածաշրջանային նշանակութիւն, որ ուրիշ բան չէր երէ ոչ՝ ինչպէս պիտի հաստատէր Դոկտ. Փրոֆ. Գեղրգ Խորոբեան, թէ հայ ժողովուրդի ազատագրական պայքարի գաղափարախօսութեան դրական անդադարձը մեծ եղաւ, նոյնպէս ձուլման վտանգի ենթակայ տարածաշրջանի փոքր երկիրներու՝ Ասորի, Վրացի, Աղուան եւ այլ կովկասեան ազգաբնակչութիւններու վրայ՝ եւ այդ իմաստով ալ, Վարդանանքը ունեցաւ միջազգային դերակատարութիւն:

Սարակոյս չունինք, միշտ պի-
տի խօսինք ու գրենք վարդանանքի
խորհուրդին մասին։
Անհրաժեշտ է որ զօրանանք անոր
ոզինվ։ Անհրաժեշտ է որ վերանո-
րոգենք մեր հաւատամթը հանդէպ
այդ ոգիին։ Ստիպողական է, որ
անով գոտեպնդուինք մենք ու անով
գոտեպնդենք մեր նոր սերունդնե-
րը։ Ներշնչումի եւ գոտեպնդումի
մշտատել կարիքը կայ մեր ժողո-
վուրդի մօտ։ Անոնց պէտքը ունե-
ցած ենք միշտ դարե՛ք ու դարե՛ք
շարունակ, որովհետեւ անպակաս
եղած են մեր ազգին գլխուն եկած
մեր գոյութեան պահպանման
սպառնացող աղէտները։ Այսօր
նուազ փորձանեներու առցեւ չենք
գտնուիք Սփիտոնի տարածքներէն
մինչեւ Հայաստան Աշխարհ, եւ տա-
րագրեալ կեանմէն դէպի տուն վե-
րադարձող՝ նոր ազատագրեալ Ար-
ցախի Հանրապետութիւնը։

Հաւատիք պակասն ու ներքին
անմիաբանութիւնը դաւած են մե-
զի դէմ: Խոկ երբ գերիշխող հանդի-
սացած են հաւատիքն ու միաբանու-
թիւնը, յաղրանակէ յաղրանակ քե-
ւածած ենք որպէս ազգ ու հայրե-
նիք: Կերտած ենք հայրենիք: Ստեղ-
ծագործած, մշակած ու բարգաւա-
նեցուցած ենք մշակոյք, զեղար-
ուկան պատրաստ սահմանութիւ-

ունստ, զիտութիւն, որոնցմով մեր
պատուաբեր ներդրումը ունեցած
ենք, կ'ունենանք ու մշտապէս պի-
տի ունենանք միջազգային խաղա-
ֆակրութեան անդաստանէն ներս։
Եկէ՛Վարդանանի ողիով լից-
քաւորուած, վերանորոգուած ու
իմաստաւորուած նայինք ներկայու
գալիք ժամանակներուն՝ բաց հա-
մոցուած, որ անով է որ պիտի նուի-
րագործուին մեր ազգային ընդ-
հանրական երազները։
Փա՞ռՎարդանանին։

Part III: Qualifications

«ՆՈՐ ՍԵՐԱԲՆԴ»

ՀԵՂՈՒՄԱՏԵՐԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

**CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅՆ
ՀԱՆՏԵԱ ՊԱՌՈՒՆ ԱՆ ԶԵԽԱՆ ՈՒ**

(ՎԵՐԱՏԵՂ, ՎԵՐԱՄԵՐԸ, ԼՈ ՀԻ-ԵՒԾԸՆ)

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՅԱՆՐԱԾԱՆՈԹ ԵՐԳԻԾՎԱԿԱՐԻՉ ՄԱՍԻՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Ծ.Խ. Ընթացիկ 2006 տարուան Փետրուար 10, կ.վ. ժամը 8:00ին, Կլինիտէյի Հանրային Գրադարանի հանդիսարահին մեջ տեղի ունեցաւ հանրածանօթ երգիծանկարիչ՝ Մասիս Արարատեանի 50-ամեայ ստեղծագործական կեանիքն նուիրուած մեծարանի երեկոն: Զենարկը նախաճննութիւնն էր Համազգային կրթական եւ Մշակութային Ընկերակցութեան:

Այս առիթով, ի մէջ այլոց ելոյթ ունեցաւ Շիրակ հրատարակաւան սեփականատէր եւ գրող Յովհաննես Հաննեսեան: Ստորեւ իր ելոյթը, որ կ'արտայայտէ եւ մեր զգացումները:

ՅՈՎՀԱՆՆԵՍՀԱՆՔՍԵԱՆ

Աւելի քան կէս դարէ ասդին հայ մամուլի էջերուն, Պէտրութէն մինչեւ Լոս Անձելոս, ամէն շաբաթ մէկ կը գրաւեն ՄԱՍԻՍ ստորագրութիւնը կրող երգիծանկարները: Նախ, թող թոյլ տրուի ինծի, յայտնելու իր բնատուր հնտաքրդութիւնը հանդէպ գիծին: Ան, գծելով կը պատկերէր երբ երեխայ էր տակաւին: Բայց ժամանակի ընթացքին ա'զդ վերածուեցաւ ներքին մղումի, եւ օրը օրին առաւել ուշագրաւ դարձաւ իր մէրը հանդէպ գծաշխարհին: Ու այդ գծով այ, բացաւ իր աչքերու ու մտքի լոյսը, յատկապէս հայ կեանքին, ափիւրք աշխարհէն մինչեւ հայրենիք:

Մասիս Արարատեանի գծապատկերները մէծամասամբ ժամանակակից անձնաւորութիւններ են ու տպաւորութիւններ անոնցէ:

Հայ մարդը ի մասնաւորի, իր արտաքին ու ներքին աշխարհով, պազալին զգացումներով, խառնուածքով, գիտելու, քննելու, իր սուեալներով, Հայրենիքը իր բնութեամբ, կառուցներով, ջերմ զգացումներով, ընկերութիւնը իր թերիներով ու առաւելութիւններով, թէ՛ հին եւ թէ նոր ժամանակները, կը սփռուին մեր աչքերուն առջեւ Մասիսի իւրայատուկ գրիչին միայն սեւ գիծերով ու սեւ կէտերով՝ պատկերագրուած ակնահաճոյ ու խօսուն համանուագով մը:

Շատ յաճախ կեդրոնացած կը նալինք քննական աչքերով՝ գծագրեալ տիպարներուն: Իրենց ինքնատիպ գիծերուն ընդգչէչն:

Այս բնագաւառին անծանօթ ընթերցողն իսկ, կը յամենայ անոնց դիմաց ու կը զգաց թէ ինք ներգրաւուած է գծապատկերով ներկայացուած այս մթնոլորտին առջեւ:

Ահա՝ պատկեր մը այս հոգեվիճակին, որ ազգային բնոյթ ունի, երբ ան կը գծէ Արարատ լեռնաշղթան, որ կ'ըսէ Արագած լեռան, «Շուտով շուրջպարի իմ կարգս ալ կու գայ եղբայր Արագած»:

Ան, գիտէ նաեւ գծագրելու իր վարպետութիւնը փոխանցելու ո՛չ միայն հանրութեան վերնախաւի բոլոր մակարդակներուն, այլեւ, մինչեւ իսկ մտնելու երեխաներու աշխարհը, գծելով անոնց թեւերուն վրայ, յատկապէս ժամացուց: Եւ խօսք կ'առնէ անոնցմէ, որ ուրիշի չտան այդ: Իսկ մանուկները գերագոյն ուրախութեամբ ցոյց կու տան ըսելով. «Մասիս ամմօն տուաւ մեզի այս ժամացուցը»:


Իր գծանկարներուն մասայական թեման ազգային կեանքի, արուեստի ու մշակոյթի մէջ ապրող հանրածանօթ դէմքերն են ու գրողները:

Հնարաւոր չէ նկարագրել երգիծանքի մթնոլորտին մէջ թեւածող բազմահազար տիպարներ: Ասոնցմէ միայն ոմանք կը բացայտաւին Մասիսի գիծերուն ընդ-

խարհը մեզ կը գրաւէ ամէն շաբաթ Լոս Անձելու մամլոց էջերէն, փոխադրելով ականատեսները իրենց նշարած կած իրենց մէջ վրիպած տեսադաշտ մը:

Այս առիթթով, թող թոյլ տրուի ինձի լայտ-

ուստով շուրջպարի իմ կարգս ալ կու գայ նորայր Արագած...



2005 թուականի վերջին ամիսներուն, Համազգային կեղրոնական Մարմնի կողմէ կը կազմակերպուի շրջապոլու դէպի Հայաստան, Լիբանան, Սուրբիա եւ Կիպրոս:

Ան, Հայաստան այցին, կրկնապէս ուրախացուց հայրենի արուեստագէտները, որոնք պատուեցին ու մէծարեցին Մասիսը, գնահատելով երգիծանկարչական ստեղծագործ իր աշխարհը:

Այս երեկոն ալ, այդ գերագոյն վկայութեանց ու գնահատանքին շարքին մաս կը կազմէ լիմնամեաց իր բեղուն վաստակին առջեւ:

[Http://www.massisweekly.com](http://www.massisweekly.com)

LARK Musical Society Presents

Master Recital



SERGEY - Violin
KHACHATRYAN
LUSINE - Piano

Wednesday, March 15, 2006 8:00 p.m.

ALEX THEATRE
216 North Brand Boulevard
Glendale, California

Donation: \$75, \$40, \$30, \$20

For additional information contact
the LARK Office (818) 900-7777

Massis Weekly

Volume 26, No. 5

Saturday, February 25, 2006

Urging Armenian Pullout From Peace Talks Karabakh President Arkady Ghukasian Demands To Be Included In Settlement Negotiations

STEPANAKERT -- Nagorno-Karabakh President Arkady Ghukasian has called on Armenia to refrain from further negotiations with Azerbaijan unless they involve representatives of his government.

In a weekend interview with RFE/RL in Stepanakert, Ghukasian said that Azerbaijan's refusal to directly negotiate with the Karabakh Armenians is the main obstacle to a resolution of the Karabakh dispute. He claimed that Baku is dealing with Yerevan only for "propaganda" purposes.

"I will see an indication that Azerbaijan is looking for a solution to the problem only if Azerbaijan starts talking to Karabakh," he said. "There is only one way Karabakh can enter the negotiating process: Armenia's refusal to negotiate with Azerbaijan. There is no other way out of this situation."

Ghukasian construed Azerbaijan's rejection of such direct talks as reflect-

ing a lack of interest in reaching a negotiated solution. "The negotiating process that was going on within the Minsk Group framework is non-existent today.... We can find a way out of this situation only in a real negotiating format involving Nagorno-Karabakh.... When Azerbaijan talks only to Armenia without Nagorno-Karabakh, Azerbaijan engages only in propaganda."

"They have to make a choice," Ghukasian added, referring to Armenia's leadership. "Either to continue negotiations in the hope of finding a formula more or less acceptable to all sides, or to refuse to talk to Azerbaijan until the latter understands that it is impossible to resolve the conflict without Karabakh."

At the same time, Ghukasian acknowledged that tactic is not without risks. Azerbaijan might be tempted to take advantage of the Armenian refusal either to delay a settlement indefinitely or to launch a military campaign to bring



NKR President Arkady Ghukasian

Karabakh back under its control.

Representatives of Nagorno-Karabakh Republic (NKR) regularly held face-to-face negotiations with Azerbaijani officials in the presence of international mediators until the late 1990s. Although the American, French and Russian co-chairs of the OSCE Minsk Group continue to visit Stepanakert on their periodical tours of the conflict zone, the NKR has since been largely excluded from the peace process.

Armenian opposition politicians say Robert Kocharyan himself drove the NKR out of the process by agreeing to largely confine the process to regular meetings between the presidents and foreign min-

Continued on page 4

Continued on page 4

Save Melkonian Campaign Gets Boost From Nicosia Court

NICOSIA -- (THE CYPRUS WEEKLY) -- The campaign to save the historical Melkonian school and to reopen it as soon as possible received a timely boost from the Nicosia District Court with a ruling that an injunction order on the property filed last August was correct.

The outcome of the proceedings in the Cyprus Courts is independent of another action filed in the California Federal Courts seeking to force the US-based AGBU, administrators of the Melkonian Educational Institute, to overturn its decision to close the high school in Nicosia.

The injunction application filed on August 23, 2005, sought an order "prohibiting the defendants (AGBU) from selling, charging, alienating, or changing in any way the use of the immovable property, and/or any part of it, or from using the immovable property for any purpose other the premises of the Melkonian School."

According to a statement issued by lawyers Christina Sarris, Alecos Markides and Costas Velaris representing the Patriarch of Istanbul, Archbishop Mesrob Mutafyan, who claims sole inheritance as original trustee of the 1926 document establishing the school, "the injunction was issued and served immediately on the defendants."

"The defendants' lawyers then appeared in Court and objected to the issuance of the injunction and filed all relevant pleading into Court submitting reasons why the injunction should be cancelled. We proceeded to a hearing of the matter [on December 20, 2005] with both sides making their submission to the Court.

"Finally, on the 3rd of February, the judge came back with a ruling confirming its original decision and thus ruling that the Injunction issued per our application on the 8th of August 2005, was rightfully issued and will stay in force until final determination of the main action."

U.S. Busts Crime Ring Tied To Georgia, Armenia, Russia

16 February 2006 (RFE/RL) — Police in Los Angeles say they have arrested eight people allegedly involved in an international fraud ring that may have sent millions of dollars' worth of stolen cars to countries including Georgia, Russia, Armenia, and Jordan.

The Los Angeles Police Department said the alleged fraud operation was conducted through a fake charity pretending to send humanitarian aid from the United States in shipping containers.

Police said 14 stolen cars linked to the fraud were seized by authorities in Georgia with the assistance of the Los Angeles police and the U.S. Federal Bureau of Investigation.

Detectives said that last year, two shipping containers from the false charity were seized in Texas and found to contain a small number of women's shoes and two expensive sports utility vehicles hidden behind false walls.

Investigators said they determined that the fake charity made more than 200 shipments overseas in the past two years, and officials estimated that cars worth a total of some \$5 million may have been among the shipments.

Bowing To Pressure From Kocharyan Pro-Government Majority Elect His Adviser Ombudsman

YEREVAN -- The National Assembly elected a longtime aide to Robert Kocharyan as Armenia's new human rights ombudsman last Friday in a second vote in just over a week that reaffirmed its loyalty to the head of state.

Armen Harutiunian, who has advised Kocharyan on constitutional law, was backed by 87 of the 131 members of the assembly. His opposition challenger, Hrant Khachatrian, got only 28 votes, slightly more than the number of parliament seats controlled by the Armenian opposition.

Harutiunian unexpectedly failed to garner the required minimum of 79 votes in the first vote that took place last week. Its surprise outcome reportedly irritated Kocharyan who discussed the issue with leaders of his three-party governing coalition at an emergency meeting on Wednesday. According to some newspaper reports, he suspects them of secretly undercutting his candidate.

Speaking at the debate that preceded Friday's vote, opposition deputies accused the pro-government majority of bowing to pressure from Kocharyan. "Armen Harutiunian represents Robert Kocharyan. Why do you want to impose Kocharyan's candidate on the people?" said Grigor

Armenian-Americans Outraged By Panel Discussion On Genocide

A panel-discussion about the Armenian genocide to be aired on U.S. television has prompted protests among Armenian Americans outraged by the presence of two genocide deniers on the program.

The panel discussion is to be aired by Public Broadcasting Service (PBS) on April 17 following a one-hour documentary — "The Armenian Genocide" by Andrew Goldberg — which describes the killing of up to 1.5 million Armenians by the Turks in the final years of the Ottoman Empire.

Բառին ամենաբարձր նշանակութեամբ հարազատ հայ մը, խոնարհութեան մէջ գրաւիչ եւ արտաքուստ հրեշտակացին:

Կը ներկայանար իր բազմաչարչար ու ցեղասպանութենէ վերապրած ժողովուրդին, որպէս գորովագութ հայր մը, բառին մէն մի տարին ճառագայթումով:

Գլխարկը, հովանոցը, զգեստին պարզութիւնը եւ աչքերուն գթառատ արտայատութիւնը կը ջնջուէին իրենց մթաստուեր հիքութենէն եւ կը ստանային այնալիսի գեղաձաճանչ պերճութիւն մը,

Շաբթ. Էջ 19

ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ

2006-2007



* Սրտի մեծ հրենուանեով եւ ուրախութեամբ դպրոցը կը յայտարարէ բացումը առաջին Հայ երկրորդական Վարժարանին Փաստինակի եւ Կիլենտէլի շրջանին մէջ:

* 2006-2007 տարեշրջանին դպրոցը պիտի մատուցանէ համալսարանի պատրաստական դասընթացներ 9-րդէն մինչեւ 12-րդ դասարանները, եւ կը ծրագրէ տալու իր երկրորդական բրամի առաջին շրջանաւարտները Յունիս 2007 թուին: Դպրոցը նաև կը դասաւանդէ Աստուածաշութիւն, Հայերէն եւ Հայոց Պատմութիւն, եւ զանազան արուեստի դպրոցները:

* Դպրոցի նախակրթարանը եւ Միջնակարգը արդէն իսկ որակաւորուած են WASC եւ ACSI հաստատութիւններու կողմէ: Իսկ երկրորդական Վարժարանին պատրաստական աշխատանքը կատարած է եւ կը ծրագրէ մօտէն նաև ցուցանուիլ, որպէս Աստուածաշութիւն, Հայերէն եւ Հայոց Պատմութիւն, եւ զանազան արուեստի դպրոցները:

* Ուսուցչական կազմը կը բաղկանայ մասնագետ, փորձառու, հոգատար եւ նուիրուած անձերէ:

* Միջնակարգի եւ երկրորդական վարժարանի դպրոցավայրը կը գտնուի 3700 E. Sierra Madre, Pasadena. Ան ունի հսկայ դասարաններ, մատուռ, մարզարական համակարգիչ եւ գիտական դասերուն կեղոններ, նաև աշխատանքային դպրոցներ:

* Դպրոցը կը հրաւիրէ աշակերտներ որոնի լրջօրէն կ'ուզեն հետեւիլ համալսարանի պատրաստման դասընթացներուն:

* Դպրոցը պատրաստ է նիւթակնա օժանդակութիւն տալու փայլուն եւ տիպար աշակերտներուն:

* 2007 թուին, դպրոցը կը ծրագրէ 11-րդ եւ 12-րդ կարգի աշակերտներուն շրջապտոյտի տանիլ դէպի Հայաստան:

* Արձանագրութեան եւ յաւելեալ տեղեկութեանց համար հանեցէն դիմուն դպրոցի գրասեննեակը (626) 798-5020 թիւին կամ այցելեցէն դպրոցի website-ը www.safagmesrobschool.org:

GENERAL CONTRACTOR BID REQUEST

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E06-16, Module 8.6 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, March 23, 2006. The project generally consists of the installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies in 24 single-family residences and two multi-family residences (consisting of three units each). Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at [bobhopeairport.com](http://www.bobhopeairport.com) under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. Two Pre-bid conferences have been scheduled for March 1, 2006 and March 8, 2006, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California. Attendance at one or the other conference is Mandatory.

ԱՅԺՄԱԿԱՆ ՆԻԹԵՐ

**ՕՐԸ ՕՐԻՆ
ՀԱԽՈՐԴ ՈՐՍՈՐԴՅՈ ԵՒ 100,000 ԶՈՅԵՐ**

ՍԱՀԱԿԹՈՒԹՅԱՆ

Ամբողջ աշխարհ կրնայ շատ ալժմէական դասեր քաղել ԱՄՆ-ի փոխ-նախագահ (Ես չընտրեցի զինք, զիս մի մեղադրէք) Տիք Զէնիի Լոռի (quail) որսորդութեան վերջերս կատարած ձախորդ արկածախնդրութենէն:

Հարկ է նշել, ամէն բանէ առաջ, թէ օրինական ոչ մէկ միջոցառում եղած է, մինչեւ այսօր, ամերիկան քաղաքացի Տիք Զէնիի դէմ՝ ուրիշ ամերիկան (ոչ իրաքցի կամ աֆդան, եւ այլն) քաղաքացիի մը կեանքը վտանգելուն համար: Իսկ իրաւաբաններուն կը ձգենք պատասխանը այն հարցման թէ ի՞նչ կրնային ըլլալ միջոցառումները, եթէ որտորդական տուժեալ թիրախ հանդիսացող Հէրրի Ուիթինկթըն ի՞նք ըլլար այս վիժած նշանառութեան հեղինակը, եւ Զէնին՝ սուժողը: Հապա՞ եթէ դժբախտ նշանառուն դաշնակից ոռու մը կամ, ըսենք, սէուտցի արաք մը ըլլար...:

Երկրորդ - քսանմէկ ժամ ուշացաւ արկածի լուսաբանման յայտարարութիւնը: Աւելի ուշ, մամուլին յանձնուեցաւ ամէն չնաշխարհիկ պատճառաբանութիւնը թէ սկիզբը իրենց ամբողջ ուշադրութիւնը կեղրոնացած էր արկածէն վիրաւոր Ուիթինկթընի առողջական վիճակին եւ բուժման համար առնուած քայլերուն վրայ: Այնպէս կ'երեւի թէ Զէնիի մամլոյ բանքերը շատ զբաղած էր - կրնայ ըլլալ թէ ի՞նք էր վիրաւորեալ ինամող բժիշկը:

Ողբերգակատակերգական ան-

հեթեթութեան մրցանիշը, սակայն, կ'երթայ հեռուստացուցի 5-րդ կայանի (KTLA) երէց խօսնակ Հէլ Ֆիլլորին: Ան զարմանք յայտնեց այն հանգամանքին վրայ որ, մինչ աշխարհի բոլոր կողմերը այնքան ծանրակշիռ հարցեր կը վիտային, թղթակիցներուն կողմէ Սպիտակ Տան մամլոյ ասուլիսի ընթացքին եղած էին հարցումներ՝ Զէնիի որորդութեան վրայ: Գիտակ վեթերան խօսնակի իմաստուն շեշտով, անուղղակիօրէն ամ մեղադրեց թղթակիցները՝ իրենց ծանծաղամտութեան ու թեթեսալիկութեան համար: Մօտաւորապէս մէկ վայրկեան ետք, նոյն կայանի նոյն ծրագրին վրայ, Ֆիլլոր ինքնագու ժայխով կը ցուցադրէր շուներու գեղեցկութեան մրցոյթ մը, երբ քիչ առաջ իր անցողակի ակնարկութեան արժանացած աշխարհի ծանրակշիռ հարցերը իրենց լուծումը չէին դասակաւին: Ան հարկ չզուտ անդրադառնալու թէ որո՞նք էին այդ հարցերը եւ թէ, որպէս հեռուստացուցի եփուն խօսնակ, ի՞նչ առաջարկներ ունէր անոնց կարելի լուծումներուն առնչութեամբ:

Միւս կողմէ, շուներու գեղեցկութեամբ հետաքրքրուող Հէլ Ֆիլլոր անշուշտ հարց չտուաւ Տիք Զէնիին թէ ի՞նչ զործ ունէր անտառներու խորերը՝ անմեղ - ու գեղեցիկ - լոռեր սպաններով, երբ իրաքի մէջ այնպիսի ծանրակշիռ հարցեր կային դեռ չլուծուած ու չլուսաբանուած, ինչպէս 100,000 անմեղ իրաքցիներու սպանդը - սպանդ՝ իր «պուսին» եւ ի՞ր ստավատիր պատճառաբանութիւններով: Ին ու-

**ՎԱՐԴԱՆԻ ՇՈԳԻՆ
ՀԱՅԿԱԶ ՊԵՏՐՈՍԵԱՆ**

Վարդանի հոգին պայծառ երկինքէն,

Վարդանի հոգին անմահ, անսահման,

Կ'իջնէ այս գիշեր գաղտնի բոլորէն,

Աշխարհի հայոց իրեն պատուանդան:

Կ'իջնէ աներկիր, երկիրը հայոց Անմար կարօտով, սիրով վառվուն,

Խնկելու համար աճիւմը սրբոց եւ սերունդը նոր՝ մեր հին քաջերուն:

Աշքը կը բանայ մեր նոր աշխարհին...

Սիրտը կը իրծուի, հոգին կը խայտայ

Ի տես ծաղկիլը Երան ու դաշտին,

Բարգաւաճումը գիւղին, քաղաքին:

Կը տեսնէ այսօր աշխարհը ամբողջ,

Յառաջ կ'ընթանայ որպէս կուռքանակ,

Գիտութեամբ զինուած,

Վ

Վարդանի, կենսառողջ,

Կրանիտեայ կամքով դէպի յաղթանակ:

Ամէն մէկ արեան կաթիլի փոխան

Բուսեր է հիմա ծաղկի մը բոսոր. Եւ բարձրացել են շէնքեր բազմազան

Եւ գործարաններգործօն ու հզօր:

Վարդանի հոգին կը խայտայ հիմա,

Սա տղոց դէմքին, խորքը սրտերուն,

Շունչը Վարդանի այսօր կը պոռթկայ

Լիաթոք, անզուսպ, վճիտ ու հոսուն:

Վարդանի հոգին կը մեծնայ այնքան,

Որ կ'ընդգրկէ ողջ աշխարհն հայրենի,

Սասիսէն մինչեւ Արագած, Սիփան,

Լուծուելով ընդմէջ հայոց Երկինքին:

Ռաքքա, 1985

ղարկուած, մինչեւ ատամները զինուած անկոչ «որտորդ»ներու կողմէ: Ի վերջոյ, ահաբեկչութեան ու զանգուածային բնաջնջման զինքերու դէմ մէր նախագահին եւ իր փոխին ձախորդ նշանառութեան ու մարդկակալին հաւատոր վրիպանքին հետեւանքը չէին 100,000-է աւելի այդ անմեղ գունդը: Անոնցմէ ամէն մէկը՝ իր անունով, ազգանունով, սիրելիներով - ու երազմներով: Թղթակից-

ներու ծանծաղամտութենէն գայթակղած իմաստուն խօսնակը չէ՞ր կրնար ցուցադրուած շուներու գեղեցկութեան մրցոյթի կողքին հեռուստացուցի իր պաստառին վրայ գէթ նոյնքան մը տեղ տալ մարդկակալին կեանքի այսպիսի զանգուածային բնաջնջուածին, միջազգային անձայրածիր պաստառի վրայ օրցերեկով շղթայագերծուած ոճրային ողբերգութեան:




الشرق مطعم
WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT
“Where the East Meets the West”

MEDITERRANEAN - LEBANESE FOOD

**BANQUET HALL
CATERING FOR ALL OCCASIONS**

**FAMILY ENTERTAINMENT
EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW**



NAZO, VARTAN, AMIR &
SINGER MUHAMMAD

**CALL FOR RESERVATIONS
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641**

910 E. MAIN ALHAMBRA, CA



BELLY DANCING

ԳՐԱԿԱՆ

ՄԵԿՆՈՒՄ ՀԱՅԿԱՀ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Հայէպէն հարաւ, բլրաշարքերու վրայ կայ հայկական գիւղ մը եագուպիէ անունով; Դարեր առաջ ափ մը հայէր, հաւանաբար հայածական եկած ապաստանած են այս շրջանին մէջ, առուն կառուցած, այդի աճեցուցած ու ապրած են երկար, երկար ու հասած մեր օրերուն:

Հայր առանց եկեղեցիի չէ ապրած: Կառուցած են եկեղեցի ու պաշտած իրենց հայրերուն Աստուածը: Դարերը յաջորդած են դարերու եւ եագուպիէի հայէրը մկան են մոռնալ իրենց մայրենի լեզուն:

Բայց Մէծ եղեռնէն ետք, երբ Հայէպը դարձած է մայր գաղութու կազմակերուած, ազգը չէ մոռցած այս հեռաւոր գիւղը եւ Հ.Բ.Լ. Միութիւնը, հաստատած է վարժարան, որպէսպի գաղութին բնակչութիւնը վերադառնայ Ս. Մեսրոպի լեզուին:

Ահա այս գիւղին մէջ ծնած է Հայկագ Պետրոսեանը եւ օր մըն ալ զիւղին նախակրթարանը աւարտելէ ետք, անսալով բարի մարդոց խորհուրդին՝ մէկնած է կիպրոս ու դարձած Մելքոնեան կրթական Հաստատութեան սան:

Հոն, Հայկազը իր սիրաը ջերմօրէն բացած է հայոց լեզուի հրաշքին դիմաց: Իր մայրենի լեզուին ուսուցիչը եղած է Վահէ Վահեանը: Մայրենի լեզուի դասերը որպէս պատարագ մատուցուած է աշակերտութեան եւ Հայկազունը հոգեպարար ազգեցութեան տակ այդ պատարագին, մկան է բանաստեղծութիւնները գրել:

Աւարտելէ ետք կրթարանը, Հայկազունը կը վերադառնայ եագուպիէ, իր ծննդարձութեանը անդապահը, որուն բնութիւնը, անդաստանները, այդինքը այնքան հարազատ էին իրեն համար:

Այստեղ, Հայկազը նախ կը ծառայէ իր համագիւղացիներուն: Շրջան մը ետք կ'իջնէ Հայէպ ու ահա կը սկսի ուսուցչական ասպարշիքի իր կեանքը, զոր պիտի շարունակէր մինչեւ իր հազարեան կոչուիլը, աւելի քան կէս դար:


Այս տասնամեակներուն, Հայաստանի բարձրագոյն հաստատութիւններու դռները լայնօրէն կը բացուին սիրութահայ ուսանողներու առջեւ: Հայկազն ալ կ'ուզէր շարունակէլ իր ուսումը, բայց ալ ուշ էր: Վարժուած էր աշակետներու հետ ըլլալ, երբ իր համագիւղացիներէն շատեր հայրենիք մէկնելով դարձած էին բժիշկներ, տատամնաբոյժներ, ճարտարապետ ու երաժիշտ:

Եթէ տանք անուններ այն հայ վարժարաններուն, ուր պաշտօնավարած է Հայկազուն, էջ մը տրամադրելու ենք թուելու համար զանոնք:

Ամենէն աւելի, Հայկազունը պաշտօնավարած է Հայէպի կրթամիրաց եւ կիլիկեան վարժարաններուն մէջ եւ միջոց մըն ալ եղած է պատասխանատու հիւսիսային Մուրիու Ռազգաք քաղաքի ազգային վարժարանին:

Իր կեանքը եղած է նուիրում քանի մը սերուղներու համար: Կանուխին անդամակցած է իր սիրած կազմակերպութեան՝ Հ.Բ.Լ. Միութեան, որուն վեթերան անդամներն մէկը եղած էր:

Ինչ շուտ անցան տարիները: Ամուսնացաւ, զաւակներ ունեցաւ, զանոնք ուսումի առաջնորդեց: Իր



դուստրերէն մէկը ուսուցչուհի դարձաւ հետեւով իր օրինակին: Զաւակները գուրգուրանքով շրջապատեցին զինք: Ու ինք եւս գուրգուրաց իր զաւակներուն վրայ: Եւ օր մըն ալ տարիքը հասած էր տեղ մը, որ պէտք է հանգստեան կոչուէր: Բայց ինչպէս հեռու մնար հայ դպրոցէն, իր ժրաշան աշակերաներէն: Մէկ-մէկ բանաստեղծութիւններ կը գրէր եւ յաճախ կը միշէր Մելքոնեանցի երեմնի իր ընկերը՝ Մարտիրոս Գուշագնեանը, որ դպրոցի օրերուն զինք քաջալերող դր եղած էր:

Եւ օր մըն ալ ցանկութիւն

ունեցաւ հրատարակելու իր բա-

նաստեղծութիւններուն մէկ ժողո-

վածուն ու հրատարակեց ոչ միայն

մէկ, այլ՝ երկու զիրք.- «Հունձք եւ

Յոյս» անուանեց առաջին զիրքը,

որուն լոյս ընծայումին օգնեցին իր

հայրենակիցները՝ եագուպիեցինե-

րը Բժ. Աբրահամ Քասիսի գլխա-

ւորութեամբ: Երկրող զիրքը կո-

չեց՝ «Դարձեալ Հունձք եւ Յոյս»:

Այս անգամ օգնութեան հասան իր

զաւակները՝ Պետրոսն ու Շահէն:

Պետրոսը եկաւ հասան հասան իր

զաւակները՝ Ամերիկա-իւնին:

Միութիւնը: Ինչպէս Հայկազը ծա-

ռայեց բարձրագուրծականին ոչ միայն

մինչեւ իր 83 տարիքը, երբ Հոկ-

տեմբերին իր տկարացած մարմի-

նը չիմացաւ անողոք հիւսինդու-

թեամբ: Եկած եմ յարգելու Պրն.

Հայկազը, որ հինգ տարի ուսու-

ցիչս եղած էր: Բարի մարդ էր, շատ

բարի, հայրաբար կը վարուէր

մեզի հետ կիլիկեան վարժարանին

մէջ:

Հայկազը բարին սերմանեց եւ

իր ցանած սերմերը մէկի տեղ

հարիւր պտուղ պիտի տան:

Հակառակ իր յառաջացեալ

տարիքին, Հայկազուն այսպէս զրեց.-

Պայքար ընդդէմ նահանջի,

Պայքար ընդդէմ նահանջի ան-

յուսահամ կը մղեմ,

Ամէն մէկ օր ու մէկ ժամ, ամէն

վարկեան անընդհատ,

իմ հոգիովս աննահանջ,

բոռուցքով կուռ ու սեղմ,

Որ զան ի սպառ զգեստնեմ,

թողում անուժ մահապարտ:

Հայկազը լաւ տիրապետելով

արաբերէն լեզուին, կատարեց

ՀԱՅԿԱՀ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂՑՈՒԹԻՒՆՆԵՐԵՆ ԵՒ ԹԱՐԳԱՍԱԿԱՆ ԱԶԽԱՏԱՆՁԵՐԵՆ

ԱԼԵՖԱՅԻ ԿԻՐԱԿԻ

Ալեֆայի կիրակի, կը յիշեցնես

համրօտէն

կիրակին հին օրերուն.

Եւ սիրտիս մէջ կը դրոշմես անոյշ

դող մը անցեալէն

Անմեղութեան մէջ օրորուն:

Ալեֆայի կիրակի, կը յիշեցնես

առտուներուդ մէջ անոյշ

երք քու կոչնակի հնէէ

Կոչնակը մեր կը յիշեմ որ

մեղութիւն, տրտմանոյշ

իմ անցեալս կը կոչէ:

Ալեֆայի կիրակի, կողիդէն

պառկած այն վանքըն

նուիրական գուլաներն

բարձրանան երկինքին

կը խնկարկն զիս յուշեր:

Կիրակի կիրակի կը յիշեցնես

առտուներու մէջ անոյշ

երք քու կոչնակի հնէէ

Կոչնակը մեր կը յիշեմ որ

մեղութիւն, տրտմանոյշ

իմ անցեալս կը կոչէ:

Ալեֆայի կիրակի կը յիշեցնես

առտուներու մէջ անոյշ

երք քու կոչնակի հնէէ

Կոչնակը մեր կը յիշեմ որ

մեղութիւն, տրտմանոյշ

իմ անցեալս կը կոչէ:

Ալեֆայի կիրակի կը յիշեցնես

առտուներու մէջ անոյշ

երք քու կոչ

ԴԵՊԻ ԿԱՐՈՏԻ ՃԱՍԲԱՆԵՐ ... ԻՆՍՍՈՒՆ ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

ՊՈՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ

Առաւոտ է, իջմիածնի խճողիի
եզերքին թիկնած Մուսա Լեռ աւանի
արեւելեան կողերով հպարտ քայ-
լում ենք դէպի հանդիպակաց բլու-
րը: Նրա հարթակին է կանգնել
իննառև տարիներ առաջ Մուսա
Լեռան հայոց բարձունքներում
մղուած յաղթական ճակատամար-
տերի փառքը յաւերժացնող քարե-
ղէն կարմիր յուշարձանը: Արեւն իր
հուր արծաթ վարսերն է ցողել
յուշարձանի ճակատին քանդակուած
գրոհի գնացող մարտիկների վրայ: Յու-
շարձանի երկու աշտարակները
գրկել են նրա գագաթին բազմած
թեւատարած արծիւը, որի հայեաց-
քից քարացած խոցնք է ժայթքում:
Կանգնուած են նրա առաջ, ճարտա-
րապետներ՝ Ռաֆայէլ իսրայէլեանի
ու Արա Յարութիւնեանի արմենա-
կան տաղանդն է յորդել կարմիր
քարին՝ լեռնականների դիմադրա-
կան ողին, ազատութեան կածքը,
արիութիւնը, քաջութեան խոցանքը
քարացել են այս բլուրի քարերէն
յուշարձանին: Երկար կանգնուած եմ
նրա դիմաց, կարմիր ցոլքի մէջ
ամբարուած նրա խորհուրդը յոր-
դում է հոգուս մէջ, սիրտս է նրա
կարմիրով պոռթիւն, տրոփում ուժ-
գին, զարկում երակներիս ափերի
պատերին, գրգիրում իմ նախնիների
ողու տարափից:

Անցունում ենք յուշարձանի կամարով, կարծես քաջերի քարեղին մեհեան լինի այն: Նրանից հոսում է լեռնականների դիմադրական ոգու հուրը, փայլատակում է հօգիս նախնիներիս պայքարի շանթերի կայծերի շեղչերից: Փոքրիկ հարթ բացատ, դէպի վերեւ քայլում են վէջ աստիճանները գրկելով քարեղին դուռը: Դրան կամարի վրայ իջել է Մուսա Լերան կարմիր գագաթին յառնած, իրենց փրկութեան խորհրդանիշ՝ ավիտակ ռազմանաւը, կոնսակին թիկնած խաչակիր գմբէթ: Ես էլ եմ քարացել, թուչում դէպի իմ մանկութիւն: Տառապալի է ցիշողութիւնը: Տառապում են իմ արեւալին ցիշողութեան պոռթկումներից: Այն տանում է ինձ լոյս դարձած անցեալի ոգեղինացած անդաստաններ, յաւերժութիւն դարձած նախնիներիս կենդանի պատկերներ, իմ մանկութեան օրորանի երկրի լեռներ, արտեր, պարտէզներ, բարձրանում հայրենի տան քարէ աստիճաններով, մտնում տուն, ընկնում հայրական բազուկներին մէջ, մայրէկիս անուշ գգուանքին, գրկում փոքրերին... ապա աչքերս յորդում են ջրի շիթերով: Սական եթէ տկար լինէր ցիշողութիւն, քու երեւակացութեան թեւերին բազմած այցի չգալին քեզ լոյս նախնիները, այնտեղ բազմած քու երկիրը, չմտնէիր անցեալ կեանքի մէհեաններ, չերկրպագէիր նրանց բազմիններին, ինչպէս պիտի լացի հրճուանքը ապրէիր, այն աւելի դաժան չէ արդեօք:

Երազներ չեն որ գալիս են ինձ,
այլ ես ինքս բազմած երեւակայու-
թեանս լոյս թեւերին զնում եմ իմ
կեանքի քառուղիներ, կարօտի ճամ-
բաներով դէպի իմ ծննդավայրի
մանկական աշխարհ: Այս յուշարձա-
նի կարմիրը գրկած զնում էի,
մտքիս լրջան էր վարդացել եւ տարել
ինձ անցեալի հրանուանքի վայելքի
անդաստաններ: Այսաէս, մանուկ էի,
ասում էին ուխտի ենք զնում, դժուար
էր ինձ յաղթահարել լերան բար-
ձունքները: Ամրակազմ, կորովի, հօ-
րաքրոջս ինձ կոննակին շալակած

տանում դէպի գագաթը լերան։
Մեծացել էի լերան փէշերին ժպտա-
ցող շէնում։ Տամնըերեք տարեկան
մեծ մանջ դարձակ այնտեղ։ Ծնողնե-
րիս առաջը ընկած ուխտագնացու-
թեան ինք գնում։ Ունկնդրել էի
Հայրիկիս պատումները, հպարտ քայ-
լում եմ դէպի վերեւ, դէպի ամպերը
արշաւող ուազմանաւ, լուսնի սպի-
տակով քօղուած մարտական յաղ-
թանակի ուազմական յուշարձան։
Հայրիկիս հետ ծառի ճիւղերից
հիւղակ եմ պատրաստում, որպէս
յիշատակ այն հիւղակների՝ որտեղ
53 օրեր ապաստաննել էին նրանք։
Կանաչ հիւղակ, ծառերի կանաչ
բուրմունք, այնտեղ ենք ընտանի-
քով։ Յուշարձանի բացատի եզերք-
ներին, մեր հիւղակի կողքին, անտա-
ռը գրկած բազում հիւղակներ՝ հիւ-
ղաքաղաք։ Հիւղակի առաջ խառուցկ
ենք վառում, խառուցներ են վառ-
ում, նրանց կարմիրով յուշարձանն
է վառում, լեռն է շարագունում,
լերան կարմիրը իջնում է ծով՝
վառելու նաեւ նրա կապոյտ ջրերը
եւ արդեօք ջրահարսերը այրուող
ջրերից արբեցած չէին ցատկում
ափեր եւ պար բռնում կրակալոյսի
մէջ։ Ամբողջ գիշերը լոյս, լոյս
դարձած գիշեր, լոյսի հեշտանքով
արքած գիշեր։

Աւագանսա արագալը պատ-
ռում է մշուշի քողը եւ միջօրէին
կազմում յուշարձանի վրաց իր ար-
ծաթ լոյսի շողերով շոյում նրանից
մի քչիկ ներքեւ ննջած քաջերի
սպիտակ դամբանները: Թնդում է
լեռը ուխտագնացների խրախճան-
քից, յուշարձանի մօտիկ հարթակին
են խմբուած, արեւի ճառագայթները
խուրձ, խուրձ բոնած նետուում են
պարի, Խըտըրպէկցի թմբակահար
կիրակոսն է զարկում թմբուկը, նրա
հետ Տէւէնն է հնչեցնում իրենց
նախնիների պարեղանակները: Զար-
կում է կիրակոսը, թմբուկը որոտում
է, պատուում լերան ոտքերը զրկած
ծովի ջրերը, պատուում տարածու-
թիւններ եւ աւետում այս լեռներում
մղուած քաջերի յաղթանակի տօնը: Պար-
ում էին հարթակում, արբեցած
իրենց յաղթանակի ողեկոչումից:
Զարկում էին հողին հայրենի, զար-
կում էր կիրակոսը, դղրգում էր
զագաթը, կարծես լեռն ածբողջ
շարժում եւ նրա արձագանգը չէր
համում արդեօք հեռու երկրներ:

իննառևն տարիներ երկիր մոլո-
րակը պատուել էր իր արեւի շուրջ
բոլորը եւ իննառևն տարիներ յետոց
էլ զեր վառւում է նախնիների
մարտերի հուրը իրենց ժառանգնե-
րի սրտերում։ Եւ դարձեալ ուխ-
տագնացութեան էին գնում իրենց
լեռներից շատ հեռու հայրենի երկ-
րի այս բլուրին՝ իրենց յաղթանակը
յաւերժացնող կարմիր յուշարձա-
նին։ Հիւղակների փոխարքն վրան-
ներ էին լարում եւ անցեալի յուշե-
րով դարձեալ գիշերացին խառովկ-
ներ վառում, նրանց կարմիր լոյսով
շառագունելու հայու ոգին խորհր-
դանշող լերան ճերմակ ձիւնը։ Օտար
երկրներ հանգուտանած իմ սրտի
տրոփիւնների մէջ միշտ հնչել է
արձագանգը իմ մանկութեան եւ ես
թռչելով ովկիանոսներ ու ցամաքա-
մասեր ուխտագնացութեան եմ եկել
այս բլուրի յուշարձանին, լեռնական
քաջերի մղած մարտերի տարեղար-
ձի տօնի փառաբանմանը մասնակ-
ցելու։

Ծանօթ թէ անծանօթ, այդ
առաւօտեան բոլորը իրար չնորհա-
ւորում էին՝ իրենց լեռների քաջա-
մարտի յաղթանակի իննատուն ամենա-

կի առթիւ: Իրենց բարբառով «Շնիւրհիւկիր Զատէկդ» (Զատիկի շնորհաւոր), որոնց համար այդ տօնակաստարութիւնը Զատիկի չափ սրբազն է: Ժպտում են, ժպիտ են հագել դէմքերը նրանց, նայուածք-քներից թուշում են յաղթանակի հպարտութեան շողեր, անցորդ քաղիր այն, քու հոգում էլ թող պոռթկաց նրանց նախնիների սիրանքը: Ընթերցող, որու ինձ մի այլամիր իմ հպարտութեան համար, զիտես որ մի բուռ լեռնակամներ, իրենց ցեղին սրտի զարկերի, իրենց կամանց պատուի, իրենց մանչերի կեանքի համար, առանց վրկութեան դիւզն յոյսի, իրենցից տասը անգամ աւելի ու արդիական գինքերով զինուած թշնամու բազմահազար զօրքի դէմ հինգ յաղթական ճակատամարտեր են մղել, բազում հարիւրներով զոհեր պատճառելով նրան: Հաւատակնամ, մեր Նահապետ Հայկը, պատերազմի աստուած Վահագնի հետ իրենց տիեզերական տաճարներից իշել էին այդ լեռներ եւ իրենց կոռու ու յաղթանակի ողին խոյացեր նրա պաշտպանների սրտերին:

Ուխտել էի, Մեսրոպի մեծասրանչ զրերի համեստ խօսքով բարբառելու իմ մանկական հոգում արեւակալած ծննդավայրի յուշերը, նրա գեղահրաշ բնութեան, նրա լանջերին բազմած շէների ու մարդկանց հմայքի ցոլքերը ճառագայթելու նրա ազգապատումի մատեանում: Մաւալուն ու պատկերազարդ, հազարօրինակով, «Մուսա Լերան Ողջոյն» զիրքն էի հրատարակել: Եւ այդ օրը զրքի երեսին ժպտացող յուշարձանով, նրա ստորոտի ծովի ջրերին բազմած ուազմանաւերով եկել էի ողջունելու լերան յաղթանակի ինմասուն ամեայ տարելիցը: Ուխտել էի այն անվճար նուիրել բոլորին, ընթերցողներին թէ շընթերցողներին, իմ բաժին հրաժանանքն էլ լինելու այն, որ այդ յուշարձանը, այդ մարտերի զողանչները գնալու էին հայոց տներ, նր ալոյալ վառելու այնտեղ: Խմբուել էին շուրջան, երկու ինքնաշարժերի թափքերի շուրջը՝ «Հայաւարի» հրմտկում էին իրար հայ ոստիկաններ շտապել էին «հերթ» պաշտպաննելու: Նայուածք-քներից պարծանքի ալիքներ յորդած տարեց Մուսալեռոցիներ, զրքի էջերը բարձր պահած, նախնիների նկարներն էին մատնացոյց անում: Կանչում էին իրենց գերդաստանների մարտնչողներին, Հայկական Լէգէոնի մարտիկներին, որոնցից շատերն այդ զրքի էջերից նայում էին: Եւ այդ օրը մարտերում զոհուած մարտերում քաջազնացած լեռնա-


կանները արդեօք չէին իշել կարմիր
յուշարձանի հարթակ, իրենց էլ
ինստուն ամեակի շխաժրող փառքի
տօնախմբութեամբ արբենալու: Պայ-
ման չէ միայն բաց աչքերով տեսնել,
պէտք է հաւատալ նաեւ, ապա փակիր
աչքերդ, տես ինչպէս ես հոգու
աչքերով պատում տիեզերքի խոր-
հուրդի վարագոյրը, այնժամ դու
պիտի տեսնես այն ինչ քու հոգին է
տենչում:

Իսկ մէկը կանչում էր ֆնտրի
թոռն եմ: Այն ֆնտն էր, որ մի կոռուի
ժամանակ դիրքը չլքելով կրակ էր
տեղացի գրոհող թշնամու վրայ,
սակայն պաշարման օղակի մէջ ընկ-
նելով զոհուել էր: Նրա մի փողանի
հնառն որարդական հրացանը Սուէ-
տի (Նախկին Լէցւիեէ, այժմու Սա-
ման Տաղը) պիղաքաղաքի փողոցնե-
րով էին ցուցադրել, կանչելով որ
այդ գէնքի տէրը նրանով հինգ
զինուորներ էր սպաննել:

Պահ որսացող թղթակիցներն
էին շտապել, «Երկիր Մէտեայ»
հաղորդման կայանից էին, կուշտ
նկարահանում էին: Նկատելով իրա-
իրանցումը, ինդրեցին հարցազրոյց
վառել ինձ հետ: Գրքի ճակատի
լուշարձանը արեւին էին պարզել, որ
այն իր ճառագայթներով գրկի, նրա
լոյսը տանի ափուելու երկիր մոլորա-
կի չորս բոլորը: Ուխտաւորի բոցա-
վառ ու հպարտ խօսքով հարցազրոյց
էր: Մուսա Լերան, նրա կարմիր
գագաթի ողջոյնն էր հայոց աշխար-
հին եւ նրա դիմաց յառնած լուսնա-
լին սպիտակ թափով քարեղին սրտին:
Եւ յաջորդ մի քանի օրերին, «Եր-
կիր Մէտեայ» հեռուստատեսալին
կայանի պաստառներից այդ գրքի
ճակատի լուշարձանի լոյսը ափուուեց
հայոց մայր ոստանի վրայ:

Այդ առաւտօսը, յուշարձանի
զոյգ աստիճանների վրայ բացուող
հարթակին պատարագ էր, դիմացի
բացատին ուխտաւորներն էին լուռ
երկիւղածութեամք ունկնդրում, խա-
չակնքում, հայեացքները դէպի լոյս
ժպտացող արեւին, որը ժամեր առաջ
այցի էր գնացած եղել այդ լեռների
գագաթին աւերակուած յուշարձա-
նին, քաջերի փլաստակ տապաննե-
րին, լերան լանջերին փուռած շնե-
րին: Այդ օրը Յիսուսի տառապանքի
պատարագը չէր, պատարագ էր արեւի
լոյսին, պատարագ էր կարմիր ու
սպիտակ յուշարձաններին, պատա-
րագ էր այն լեռների կուռում դիւ-
ցագնօրէն ընկած քաջերի սիրանքի
փառաբանմանը: Վարդապետի
աղօթքներն էին հնչում կարծես
որպէս մարտակոչ, որոնք բուրվառ-

覃思·卷18



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Սահակ Թուրքիեանի «ԱՐԵՒԾ ԼԵՌԱՆ ԵՏԻՆ» Հայրենական Օրագիրը

Ստանալու համար
դիմել հեղինակին՝
Հեռ. (818) 563-6174

կամ հետեւեալ
գրախանուրթները
Կլինտէլի մէջ
Ապրիլ՝ (818) 213-4112
Պերճ՝ (818) 244-3830
Սարդարապատ՝
(818) 500-0790

ՊԱՏԱՌԻԿՆԵՐԻ ԻՄ ՅՈՒԺԵՐԻՑ

ԱԽԵՏԻՄՆԱԶԱՐԵԱՆ

Հայրու մինչեւ 1944 թուականը Քալաւաւ գիւղի գիւղապետի պաշտօնին էր: Ծերութեան պատճառով այդ թուականին նախու պատասխանատու պաշտօնը յանձեց ինձ: Ես 24 տարեկան հասակում էի:

Նա բոլոր աշխատանքները յանձնեց ինձ եւ որոշ ուղղութիւններ տուեց: Այդ թուերին լուրեր տարածուեցին հայրենադարձութեան մասին: Պետական հիմնակրներում գիւղացիների հարցերը լուծելու համար, ես էի գնում, որիմում ներկայացնում, եւ փորձում դժուարութիւնները վերացնել եւ դրականօրէն լուծել լինդիրները: Ընդհանրապէս հայ գիւղացիների յարաբերութիւնները իրարու հետ շատ լաւ էին եւ նախանձելի: Դա նախանձ էր առաջացնում պարսիկ հարեւան հողագործների մէջ: Նրանք միշտ փորձում էին երկուութիւն առաջացնել ժողովրդի մէջ: Մեր շըանում ապրող երիտասարդները մասսամբ տարուած էին ազատական գաղափարներ քարոզող իրանի «ժողովրդկան» կուսակցութեամբ, եւ դարձել էին այդ կազմակերպութեան քարոզիչները եւ համակրողները: Այդ պարագան մասսամբ դժուարացնում էր իմ աշխատանքները, մանաւանդ որ ես գիւղապետի պաշտօնն էի զբաղեցնում: Ես ամէն գնով աշխատում էի օգտակար լինել հայ գիւղացիներին եւ վերացնել ստեղծուած դժուարութիւնները: Բայց եւ այսպէս օրէց օր դժուարանում էին իմ աշխատանքները, եւ զգում էի որ իմ դէմ դաւաղրութիւններ կան եւ ոմանք փորձում են իմ պաշտօնը դրաւել: Ես ստիպուած թողեցի գիւղապետի պաշտօնը եւ գիւղապետ ընտրուեց մէկ ուրիշ անձ, որի անունը չեմ ուզում լիշել:

Դրանից յետոյ մեր գիւղում սկսեցին ամէնօրեայ վէճեր, կոիւներ, ծեծկուուքներ եւ անախորժ բազում դէպքեր: Ես փորձում էի իմ կարողութեան սահմաններում հաշտարարի դեր կատարել: Անտանելի դրութիւն էր տիրում մեր շրջանում: Ոմանք փորձում էին հայ գիւղացիներին տեղահանել եւ զրկել վար ու ցանքից: Մեր գիւղին կից Ազնա գիւղում կար պետական շաքարի մի մեծ գործարան: Ես գործի անցայ այստեղ: Շաքարի գործարանում շատ մեծ թւով թուրքեր էին աշխատում: Դրանց գոյութիւնը այդ շրջանում մեզ համար կամկածելի էր եւ վտանգաւոր: Մի քանի հայ երիտասարդներ միացել էին նրանց ու տարուել ազատական մտածումներով եւ կարծում են իրենց յաղթութեան դէպքում ամբողջ գիւղը կը տրուի իրենց: Մայրամուտից առաջ այդ տարրերը հաւաքւում էին Քալաւայի եկեղեցու բակը, զանգերը հնչեցնում ու ժողովրդին հրատիրում էին ժողովի: Մանակցել շցանկացողներին ուժով իրենց տներից դուրս էին քաշում: Ես ծրագրում էի ամէն կերպ արգելք հանդիսանալ այդ ասօրինութիւններին: Բայց նրանք շատ համարձակ էին ու կոպիտ: Գիւղատէրը դեռ գիւղ չհասած, նման տարրեր յարձակում են կազմակերպում գիւղատէր Ղոլամ Ալի հանի դիմաց եւ

արիւնլուայ դարձնում նրան: Գիւղատէրը վախեցած ապաստան է գտնում Տ. Արտէն Քահանայի տունը: Այդտեղ եւս նրան հանդիս չեմ թողնում եւ կրկին ծեծում են: Հայ եւ պարսիկ գիւղացիները դարեր ապրել են իրար հետ հաշտ ու խաղաղ, աշխատել են դաշտերում, ջուրը հաւասար կիսե են իր արու մէջ, ինչո՞ւ մի քանի բախտախնդիրների միջուցով պիտի խանգարուի այդ բարեկամութիւնը: Այդ կոիւների ընթացքում Ալմաս Սարդայեանը օգնութեան է համում գիւղատիրոջ, այլապէս կը սապանմէին: Հենց այդ պատճառով այդ հայ երիտասարդին իր գործից հեռացնում ու պատճում են որ ինչո՞ւ է գիւղապետին պաշտպանել:

Նրանք որոնք գիւղապետին

պաշտպանել էին, արգիլում են նրանց ոչխարները դաշտ տանել, արածելու համար: Ես տեղեկանալով այդ մասին մտածեցի անախորժութիւնների առաջն առնել: Գնացի ու ճանապարհի վրայ կանգնեցի հօրեղբօր որդիներ Ղազարը եւ Մնացականը ոչխարները դուրս բերին եւ քշեցին դէպի դաշտ: Մի քանի հոգի արգելք եղան: Բողոքեցի ասելով դարեր է որ մեր պատէրի ոչխարները արածում են այս արօտներում եւ դաշտերում: Ալմասի ձեռքից փայտը վերցրի եւ անվախ կերպով ոչխարներին քշեցի դէպի դաշտ: Վերջապէս շատ մեծ դժուարութեամբ կարողացայ մասամբ հաշտեցնել գիւղացիներին եւ պարզաբանել «ազատական» կոչուած տարրերի նպատակները: Ես ինձ բաւարարուած էի զգում որ կարողացայ բազմաթիւ հարցեր լուծել եւ արդար դատաւորի դեր

կատարել: 18 տարեկան հասակից նուիրուեցի մեր եկեղեցուն եւ դպրոցին եւ ամէն կերպ աշխատեցի օգտակար լինել իմ համագլւղացիներին թէ այն օրերին երբ գիւղապետ էի եւ նրանից յետոյ էլ շարունակեցի իմ հայանպատճենութիւնները:

Բազմաթիւ բարդութիւնների եւ կեղեքումների բովից անցած հայ գիւղացին աշխատեց եւ արդար քրածինքով իր հարազատներին գոհացրեց: Անխորժ դէպքերը եւ բողոքները մեծ մասամբ հարթուում էին գիւղապետի եւ գիւղի հասակաւորների միջամտութեամբ: Իսկ պետական դատարան հասնելու դէպքում, ես որպէս գիւղապետ հանպէտ էր այսպէս օրէց օգնութեան եւ ի շահ հայ գիւղացիներին կարողացայ մասամբ հաշտեցնել գիւղապետին եւ պարզաբանել «ազատական» կոչուած տարրերի նպատակները: Ես ինձ բաւարարուած էի զգում որ կարողացայ բազմաթիւ հարցեր լուծել եւ արդար դատաւորի դեր

Jansezian Law Firm, PC

A Professional Law Corporation

Common Sense
and
Cost-Efficient
Solutions
to All Your
Legal Issues



Michael V. Jansezian, Principal Counsel

**Business Law • Personal Injury
Family Law • Civil Litigation**



Office in Plaza, 900 North Central Avenue,
Beverly Hills, California 90210-2828
Telephone (310) 449-0228
Facsimile (310) 449-0229
www.janszian.com

Initial Consultation Free of Charge
Attorney Referrals Available

ԴԵՊԻ ԿԱՐՈՏԻ ՃԱՍԹԱՆԵՐ ... ԻՆՍՍՈՒՆ ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Ծարութակուածէջ 16-ից

Ներում ծխացող խունկի խուրձերը
գրկած զնում հեռուներ՝ աւետելու
քաջերի կուռի յաղթանակի զօղանջ-
ներ: Պատարագի վերջում վարդա-
պետը շրջուելով հարթակի դրան
վրայ բազմած լուշարձանին, օրհնեց
նրան խորդուանշող քաջութեան ոպին
ու խաչակնքեց այն... յանուն ընա
յարատեւութաեն մաղթանքներով:

Փոքրիկ դադարից յետոց, յուշարձանի սանդղակների հարթակին էին բազում երկրներից, մայր ոստանից, Սուրբ Էջմիածնի տաճարից ժամանած պատուիրակներ, բանաստեղծներ, մտաւորականներ՝ Մուսա Լերան ինսուլն ամեակի ոգեկոչման մասնակցելու ու փառաբաննելու նրա սիրանքը: Ուխտաւորները ունկնդրում էին լուռ ժպիտով, նախնիների դիւցազնական խոյանքների հպարտ հայեացքներով, երեւի նրանցից շատեր իրենք էլ երազած էին այդ կրիւներին մասնակիցը եղած լինելուն: Լիբանան, Անձար բնակութիւն հաստատած Մուսա Լեռցի, Խըտըրպէկ գիւղից, Եսայի Հաւաթեանն է բարձրախօսին: Իր նախնիների պատումների խրոխա խօսքն էր հնչում: Շըջուելով դէպի լեառն հայոց քարեղին սիրտ, իննդրում էր իր զագաթին իջած հայոց հին աստուածներից, որ սպիտակ ձիւն տանէին մաղելու իրենց կարմիր զագաթին աւերակուած լուշարձանի ու նրա կողքին քաջերի տաղանների վրայ՝ նրանց լացող վիշտը ամոռելու:

Վրացը ասուղունք։ Վարդապետն է շքախմբով, շարականների երգեցողութեածը զմուռմ էին դէպի... հարիսալի օճախներ։ Հարիսա, Մուսա Լեռցինների աւանդական ճաշտեսակ, որ Մծմբանայ Սուրբ Յակոբի տօներին էին թուչնամսից ու զորենից պատրաստում։ Հստ

աւանդութեան Մծբին քաղաքի պաշտոնական վերջին ընթրիքը եղել է մնացած ցորենի հատիկներից ու թռչուններից պատրաստուած ճաշը՝ յետազայում կոչուած հարիսաց, մինչ պարսկական զօրքը յոգնած երկրամսեաց պաշարման գործողութիւններից կը թողէր ու կը հեռանար: Օճախների վրայ են իննառուն խոչոր կաթսաներ, իւրաքանչիւր անցնող տարուայ յիշատակի համար մէկ կաթսաց: Ասում էին, որ այս տօնին հարիսա պատրաստելու համար եօթ հարիւր կիլոկրած ոչխարի միս եւ նոյնքան ցորեն էին օգտագործել: Օրհնուում են դեռևս մեղմ պղպջացող հարիսայի կաթսաները, որպէս իրենց լեռների մարտերի խոյանքների ողու փառաբանում, որ այն ճաշակողները մի պահ զգացին այդ քաջարի լեռնականների կուուի ողու խորհուրդը: Եւ այդ օրը բոլորը պիտի ճաշակէին Մուսա Լեռցու հարիսան, օրհնանք մրմնջալով կուուի դիւցազներին եւ այնտեղ ընկած հերոսների անմահութեանը:

Յուշարձանի հարթակն է հոծ,
լիքը բազմահազար ուխտաւորնեով:
Թմբուկն է սկսում զարկել, պիտի
զարկի այն ժամերով, պիտի պարեն
ժամերով, եւ երկսեռ ալեհերներ,
ջահեններ, պարմաններ: Պարեղա-
նակներն են իրենց բնօրրանի, այն-
տեղ են լուռ ամբարուած իրենց
ցեղին սրտի տրոփիւնները, թերեւս
նաեւ իրենց արմենական ցեղի նախ-
նիների հեթանոսական Նաւասարդ-
եան տօների գուսանների բանբիոննե-
րի հեռու հնչիւնների արձագանգնե-
րը: Ինչու չչ նաեւ թերեւս հայկեան
մենամարտի, մարտակոչի, մարտահ-
րաւէրի դողանչների հատու, հզօր
կանչերը, որոնք յաղթանակ էին աւե-
տել իրենց:

(Ծարունակելի 2)

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻԴ ԵԹԵՐ ՀՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
Ժամը 11:00-ից 1:00
ԿԸ Էնտէյլի 26-րդ կայանից

ԱԱՍԻՒ ՀԱՐՄԱՆԱՅԵՐ

ՕՇԿԻ ՋՋՈՋՈՎԵՐԻ ԽՏԾՈՎ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

**Enclosed a check for (one year) * \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.**

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----
Tel :----- Fax : -----

ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՀՐԱՒՅՆ

**Ա.Դ.Հ.կ. Փարամագ մասնաճիւղի անդամական ժողովը տեղի պիտի
ունենայ Ուրբաթ, 24 ֆետրուար, 2006, երեկոյեան ժամը 8:30ին,
ֆասատինայի հաւաքատեղին:**

Ս.Դ.Հ.կ. Սեղրակ Շահէն Մամնաճիւղի անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 24 Փետրուար, 2006, երեկոյնան ժամը 8:30ին, թահանկալի հաւաքատեղին:

Ս.Դ.Հ.Կ. Արաքն Կիտուր Մանաճիւղի անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 24 Փետրուար, 2006, երեկոյեան ժամը 8:30ին, Կէնտէյլի հաւաքատեղին:

ՏՆՐԴԱԻՆՐՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ կ'իմանանք թէ ամերիկահայ գրող, նաեւ թերթիս աշխատակից Սարգիս Վահագն արժանացած է թէքէեան Մշակութային Միութեան գեղարուեատական գրականութեան մրցանակին: Արդարեւ, Սարգիս Վահագն այս մրցանակին արժանացած է իր «Արշվլ Կորպի» վէպին համար, որ լրյա տեսած էր 2004 թուականին, Լոս Անջելոսի մէջ: «Մասիս» ջերմօրէն կը շնորհաւորէ Սարգիս Վահագնի պարզեւատրուիլը, մաղթելով նորանոր յաջողութիւններ:

Digitized by srujanika@gmail.com

Jessica Demirdjian
REALTOR



Prudential


California Realty

9878 Hibert Street

San Diego, CA 92131

Bus 858 653-6400 E:

Call 619 846-7738 jessicad@prud.com



Զեր Ծանուցումները վստահեցեք «Մասիս» շաբաթաթերթին



**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION**

**ՀՊԱՐՏԱԿԻ ԱՆՑԵԱԼ
PROUD PAST**

**100 ԱՄԵԱԿ
CENTENNIAL YEAR
1906 - 2006**

**ԼՈՒՍԱԾՈՂ ԱՊԱԳԱՅ
EXCITING FUTURE**



The AGBU Southern California District Committee and the USC Institute of Armenian Studies are co-sponsoring a Seminar on the occasion of AGBU's Centennial to address the needs and priorities of Armenia and its Diaspora, from the perspective of Armenian university students and young professionals. The Organizing Committee is soliciting your ideas on how AGBU can continue to maintain the vibrancy of our communities well into its second century of service to the Armenian people.

Date: Saturday, February 25, 2006, 10 am to 3 pm

Location: AGBU Pasadena Center, 2495 E. Mountain Street

Hosts: AGBU and the USC Institute for Armenian Studies

Lunch and refreshments will be served.

More information, including submission form, is on: www.linxlogic.com/agbu/

To request a form via e-mail or hardcopy, please contact: AGBU Pasadena Center, Mrs. Shake Toumayan at (626) 794-7942 or SToumayan@agbuca.org

All proposals are subject to advance review. Potential speakers are requested to submit a brief, one-page synopsis using the form posted on the website above.

Deadline for submissions: January 28, 2006

Kindly RSVP to Mrs. Shake Toumayan at the AGBU Pasadena Center: (626) 794-7942.

Centennial AGBU/USC Seminar Committee

Dr. Mihran Agbabian, Co-Chair (USC), Dr. Vahram Biricik, Co-Chair (AGBU), Prof. R. Hrair Dekmejian (USC), Mr. Vahe Imasdounian (AGBU SCDC Chairman), Mr. Hovig Antabian (AGBU), Mr. Eric Boyajian (AGBU/USC), Prof. Osheen Keshishian, Mr. Vahé Kuzoyan (USC ASA), Dr. Guiragos Minassian (AGBU), Ms. Cynthia Simonian (AGBU), Dr. Harout Yaghsejian (AGBU)

ՊԱՏՐԱՍՏՈՒՅԵՔ

Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴԻ ԹԱՍՏԵՐԱԽՈՒՄԲԻ

Ardavazt Theater presents

"Un Fil A La Patte"

A comedy by French playwright George Feydeu

ԵԼՈՅԹՆԵՐՈՒՄ

Չորրեք Փետրուար 25, Կիրակի Փետրուար 26 GALA

Մարտ 4, 5 – 11, 12 – 18, 19 – 25, 26

Ապրիլ 1, 2

Հոդված 9, Orange County

ՃՈՐԾ ՖԷՅՅՈ

«ՄԱՏԻ ՓԱԹԹՈՂ»

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱԿՈՒՄԲԻ ՕՐ

**Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ 2 ամիսներէ ի վեր սկսած
«Ակումբի Օր» ընտանեկան երեկոները կը
շարունակուին մեծ խանդավառութեամբ
Փաստինակի կեղրոնին մէջ,**

Ուրբաթ երեկոները:

Յաջորդ ընտանեկան երեկոն

տեղի պիտի ունենայ

**Ուրբաթ, 17 Փետրուար, երեկոյիան
ժամը 7էն սկսեալ:**

**Փոքրիկներու մասնաւոր յախազիր ժամը 7-ին
Ընթրիք եւ ալյազան խաղեր
Զուարճակի ժամանց բոլորին
Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնէլ
(626) 794-794**

Հ.Բ.Ը.Մ ՀԱՅ ԿԻՆ

A.G.B.U HYE GEEN

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հայ Կին Վարչութեան Շախանձունութեամբ

«Հոս Ամերիկա Է»

**Ընտանեկան հարցերու վերաբերեալ սեմինար
Ներկայացնող՝ Շաքէ Եկատեան, MFT**

Ուրբաթ Փետրուար 10, 2006 Երեկոյան ժամը 6:30-7:30

Ուրբաթ Փետրուար 24, 2006 Երեկոյան ժամը 6:30-7:30

Ուրբաթ Մարտ 3, 2006 Երեկոյան ժամը 6:30-7:30

Ուրբաթ Մարտ 17, 2006 Երեկոյան ժամը 6:30-7:30



ՀԲԸՄ Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ
AGBU Alex Manoogian Center, 2495 East Mountain Street, Pasadena, CA 91104

**Մանրամասնութեանց համար մեռանայնել՝
ՀԲԸՄ (626) 794-7942, Վլթ (818) 416-1511, Լուսին (818) 687-5175**